

କବିତା ପ୍ରକାଶନୀ

ଶ୍ରେଷ୍ଠ ଫ୍ରାମ୍‌ପିଯାନ୍‌କିଟ୍‌
ପାତାର ଚରଣଶେଖର



83 B.

R-55

9484008

835.

Ր-55

ԵՐԻՒ ՐԻՒՏԵՐ

30 MAY 2011

"Ճ".

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ

ՊԵՏՎՐԱԾ

ՑԵՐԵՎԱՆ

1937

Պատ. Խմբագիր՝ Ա. Շահինյան
24 JUL 2013 Տեխ. Խմբագիր՝ Ստ. Ալթումյան
Սրբ. Ս. Փարսադանյան

1519

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

բոռով Բեկեր — Առաջարան	5
արգարիտա Վալտեր	8
յոլնի վեց հերոսները	16
ուղարացի զինվոր Դյուցր Հեղին	22
քկանգասի փոքրիկ ժաղաքը	30
վիեդոցի Ահրան Ահ. Լայֆունիշտ	38
նոռնիոն Արչեյի հաղթանակը	43
աւելի-Պինցի զյուղացիները	48
արմիր գրոշ . [Լ. Ե. Խոյստ-Խաչյանը Տառապ]	54
ապնացի կոմյերիտական հցուկին	61
աղափարը կյանքից քանից [Շինուազր. Խոյստ]	68
արիկադները համալսարանում Հոյրայից այլընթացիներից	74

Ներ պայմանագիր Տառապ

Խոյստի մողեմ Գեղարքունիքի Ռազմական հանդիպություն

Տառապ



3608
9 — 38

Գլավվիտի լիազոր՝ Խ — 9303
Հքաստ. 4133 · Պատվեր 908 · Տիրաժ 3000

ԱՌԱՋԱԲԱՆ

Գերմանիայում և Խոտալիայում, Լեհաստանում և Բուլղարիայում, Ճապոնիայում և Շումինիայում, Յեվրոպայում և Ասիայում, Ավստրալիայում և Ամերիկայում— բոլոր յերկրներում հերթական պայքարում են յերիտասարդները, մեր դասակարգային ընկերների վորդիներն ու դուստրերը:

Նրանք պայքարում են իրենց շահերի իրագործման համար, իրենց ժողովրդի ազատության համար, կուլտուրայի և առաջադիմության համար: ՅՈՒԻՌԱՔԱՆՉՈՒՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ Ե ԻՐ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ: Դադագողի կերպով, մենախուցում, խոշտանգում են մեր ընկերներից մեկին,— բայց չե՞ վոր այդ բոլորիս են խոշտանգում: Կախաղանների վրա խեղդաման են անում մեր լավագույն մարտիկներին,— այդ մե՛զ են խեղդաման անում: Արքեցած դահիճները կտրում են յերիտասարդ հեղափոխանների գլուխները,— այդ մե՛զ են մահապատժում:

Բայց ամուր ե մեր ուժը և մեծ՝ հաղթանակի մեր հավատքը,— ավելի ուժեղ և

ավելի ամուր, քան բարբարոսների և դահին-
երի բոլոր անգրությունները:

Խորհրդային յերիտասարդության թերո-
ւորյունը վառ լույսի պես լուսաշողում է
այդ պայքարը: Բոլոր նվաստացումների և
տանջանքների վրա, քաղցի և կարիքի վրա,
բանտերի և համակենտրոնացման նամբարնե-
րի վրա, վորակս պայծառ աստղ գիշերվա-
մեց, շղթաղում և մարդկության գարունը՝
Խորհրդային Միությունը:

Յերիտասարդական Կոմունիստական Խն-
տերնացիոնալի 6-րդ կոնֆերում ընկեր Դի-
Միջընկեր հետևյալն ասաց բոլոր յերկրների
առաջավոր յերիտասարդության ներկայա-
ցուցիչներին.

«Միլիոնավոր պատաճեներ և աղջկներ,
վորոնք կապիտալիստական հասարակության
մեջ դատապարտված են գոյության անտաճելի
պայմանների, ձեր յեղբայրներն ու քույրերն
են: Այդ յերիտասարդությունը կամ բոլորո-
վին չի կազմակերպված, կամ թե միավորված
ե այնպիսի կազմակերպություններում, վո-
րոնց գեկավարում և դասակարգային քշնա-
մին: Սոցիալիզմի համար կատարելիք ձեր
համար աշխատանքով դուք կկարողանաք և
պետք է ձեր շարժերը գրավեք այդ յերիտա-
սարդությանը»:

Ամեն որ բոլոր կապիտալիստական յեր-
կրներում կատարվում են նորանոր ստորո-


թյուններ ընդդեմ ննշված ժողովրդի յերիտա-
սարդության: Ընկեռում են նորանոր զոհեր,
բայց ծնվում են նորանոր հերոսներ: Անմահ,
անջնջելի՝ նրանք բարձրանում են մեր շար-
ժերում և մեզ վոգեշնչում են տարագա պայքա-
րի: Նրանք խոսում են տարրեր լեզուներով,
այլրում բոլոր աշխարհամասերում, իրար
յերբեք չեն հանդիպել, բայց բոլորն ել հաս-
կանում են միմյանց, վորովիենու հասկանում
են ընկ. ընկ. Դիմիտրովին, Թելմանին, Ռա-
կոշին, Անտիկայյնենին:

Այո՛, այդ մարդիկ մեր պարծանին են:
Միայն մե՛նիք ունենիք հերոսության այդպիսի
նմուշներ, միայն մե՛նիք ունենիք այդպիսի
առաջնորդներ— լավագո՞ւյն մարդիկ: Նրանք
մեզ համար սուրբ են ու քանիկագին:

Մեզ, ամբողջ աշխարհի յերիտասարդնե-
րիս, իր հոգատարությամբ, սիրով և իմաս-
տուն խորհրդով և շրջապատում համաշխար-
հային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստա-
լինը:

ԱՐՏՈՒՐ ԲԵԿԵՐ
(Գերմանական կոմյերիտմիության նախկին
պատգամավոր ու յիստագում)

ՄԱՐԴԱՐԻՏԱ ՎԱԼՏԵՐ



Ծովից սահում ե զով քամին և տարութեռում բարձր հասկերը։ Մայր մտնող արեգակի ձառագայթների մեջ վոսկեկարմիր են հազնում գեղին արտերը։ Ծղրիտներն այնքան բարձր են ծղրառում, վոր խլացնում են մյուս բոլոր հնչյունները, և միայն զանգերի յերեկոյան զողանջն ե դալիս հեռավոր գյուղից։

Դաշտից գարձյալ դեպի փողոցն ե ծըռվում գյուղացիական ճռուան սայլը, և զեղի վրա նստած յերկու աղջիկների խոսակցությունը մի պահ ընդհատվում է...

— Դա ծերունի Գառողերի սայլն ե։ Նրա հողամասը բոլորից հեռու յե, դրա համար ել նա միշտ վերջինն ե վերադառնում դաշտից։ Հիմտ մենք կարող ենք հանգիստ լինել...

Աղջիկը նորից շուռ ե դալիս դեպի Մարդարիտա Վալտերը և շարունակում ընդհատված զրույցը։

— Այսպես, ուրեմն, ճամբարում մենք

Հիմտ 52 աղջիկ ենք։ Բարակներն առաջվանից ել կեղտոտ են։ Առավոտյա ժամը 4-ից մինչև թիւերվա 12-ը մենք վոտքի վրա յենք։ Յեկայս աշխատանքի համար ստանում ենք որական ընդամենը 25 պֆեննիկ։ Բոլորը դժգոհ են։ Մարդարիտա Վալտերն ավելի յե ծովում դեպի իր խոսակիցը։

— Լսի՛ր, Եռնա՛, ի՞նչ ես կարծում, նորերի մեջ մերոնցից կա՞ն։

Յերկրորդ աղջիկը, ճակատից դեն նետելով մազերի անհնազանդ վունջը, մի վայրկյան մտածում ե։

— Դեռ քիչ ժամանեակ ե անցել։ Այնքան ել հեշտ չե վորեե վորոշակի բան ասել։ Բայց մի աղջիկ, — անունը Լոռա յե, — շատ լավ տպալորություն ե զործում։ Նա ինձ պատմել ե, թէ ինչպիս է Համբուրգում աշխատել արտադրության մեջ և յեղել ե արհմիության մեջ։ Բայց ինձ թվում ե ամելի շուտ, վոր նա սոցիալիստական յերիտասարդական միության մեջ ե յեղել։

— Սոցիալիստ յերիտասարդներից շատերը պատրաստ են այժմ մեզ հետ դաւաշխուժությամբ ընդհատեց նրան Մարդարիտա Վալտերը։ Դու անպայման պետք ե ուվելի մոտ բարեկամանաս նրա հետ։ Բայց զգույշ յեղիր և առայժմ շատ մի խոսիր քո մասին։

★
Մարդարիտա Վալտերը դանդաղ քայլում

Ե դաշտում գեղի կալվածքը տանող ճանապարհի յերկայնքով։ Դեռ հեռվից նա ճանաչում է իր գեմ յեկող հեծանվորդին և թափահարում է ձեռքը։ Նրանք միասին շարունակում են քայլել, նրանց կոպիտ, ծանր վոտնամանները թաղվում են փոշում։ Յերիտասարդ բանվորի գեմքը փայլում է. «Կապը նորից վերականգնված է»։

Մարգարիտա Վալտերը սեվեռակի, անվասահաբար նայում է նրան։

— Այո՛, այո՛, այդպես մի՛ նայիր ինձ։ Յես չեմ կարող քեզ պատմել բոլոր մանրամասնությունները... սարսափելի դժվար կլինի։ Բայց ահա՛ լավագույն ապացույցը։

Նամի ակնթարթ կանգ եառնում և կուրտկայից հանում մի քանի ծալված թուղթ։ Մարգարիտա Վալտերը համարյա խորս ենրա ձեռքից այդ թղթերը։ Թռուցիկնե՛ր—«գերմանական յերիտասարդությանը»։

Նա շուռ է տալիս թռուցիկը, նայում յեղրափակիչ տողերը։

— «Գերմանիայի կոմունիստական յերիտասարդական միություն»։ Իրոք վոր հոյակապ է։ — Միառժամանակ նրանք շարունակում են քայլել կողք-կողք։ Մարգարիտա Վալտերը կարդում է. Հետո պահում է թռուցիկները։

— Հիմա յես քեզ կտառմեմ մեր նորությունները։ Յերեկ պատասխան ստացա աշ-

խատանքի բորսայից։ Դեռ դու գիտես, վոր գանդատվել եյի այս գյուղում միակ բատրակուհին մնալու համար։ Քանի դեռ լավ կապ ունեյի կալվածքի հարկադիր աշխատանքի ճամբարի հետ, դոհ եյի։ Բայց այն որվանից, ինչ պետն արգելեց իմ մուտքը ճամբարը, աշխատանքը գնալով դժվարացավ։
— Բայց չե՞ վոր կապ ունես Եռնայի միջոցով։

— Այդ շատ վտանգավոր է Եռնայի համար։ Ինձ այստեղ բոլորն են ճանաչում, և յեթե մեկն ու մեկը նրան տեսնի ինձ հետ... բայց դե հիմա այդ միեւնույնն է։ Աշխատանքի բորսան բավարարեց իմ խնդիրքը, և յես անցնում եմ ուրիշ գյուղ, ուր ավելի քան 50 բատրակուհի կա։ Կապն Եռնայի հետ քեզ եմ հանձնելու։

Յերիտասարդի դեմքը գնալով տիրում եր։

Ասել ե, յես ու դու ել չե՞նք տեսնվելու, գրետա՛։

— Ի՞նչպես կարող ես այդ կերպ խոսել, ֆրից... ինձ համար ել, իհարկե, ծանր ե, վոր բաժանվում ենք։ Բայց չե՞ վոր այդ անհրաժեշտ ե մեր աշխատանքի համար։

Ց

Ծառի բնին է հեծած հեծանիվը։ Գրետան, Եռնան և Ֆրիցը պառկած են խոտի վրա։ Նրանք վերջին անգամն են իրար հետ։

Ամեն ինչ քննարկված է, հետագա աշխատանքը վորոշված: Մոտենում է անջատման մոմենտը...

Ֆրիցը բարձրանում է և դառնում դեպի Մարդարիտա/Վալտերը:

— Դու մեղ յերեք չես պատմել, թե ի՞նչպես այն ժամանակ ձերբակալվեցիր Բեռլինում: Խսկապես առած, ի՞նչ կատարվեց:

Աղջկա քնքույշ դեմքը դառնում է դաժան:

— ԶԵ՞ վոր յես այն ժամանակ աշխատում եյի Նեյքելնի յենթառայոնական կոմիտեյում: Աշխատանքը շարունակվեց նաև Հիտլերի իշխանության գլուխն անցնելուց հետո: 1933 թվի մարտ ամսին Փաշխտներն ինձ ճանկեցին առաջին անգամ:

Նրա ձայնը դադարում է հանդիսութիւններ նա շարունակում է կրքոտ կատաղությամբ:

— Ա՛յ թե խոզեր են: Նրանք ինձ մերկացրին, պառկեցրին սեղանի վրա և մի քանի ժամ շարունակ ծեծեցին ուղինե մահակներով: Այդ է Փաշխտների ցուցաբերած «հերոսությունը»: Բայց յես վո՞չ մի ցուցմունք չտվի, վոչ մի ծատուն չհանեցի: Նրանք ինձ յերկար պահեցին կալանքի տակ: Վերջապես հասկացան, վոր ինձնից վոչինչ չեն պոկի, և աղատեցին:

— Ի՞նչ բանի ճեռնամուխ յեղար կալանքից աղատվելուց հետո:

— Ո՛, այն ժամանակ բախտութանեց: Մի քանի որից յես արդեն աշխատանք ստացա Ոբերշպուելի ԱԵԳ կարելի գործարանում: Անմիջապես մտա ույոնական գործարանային միության մեջ և աղջիկների հետ ձեռագործի յերեկոներ կազմակերպեցի: Քիչ - քիչ նրանք սկսեցին վստահություն տածել հանդեպ ինձ, և ինձ հաջողվեց նրանց մեջ խումբ կազմակերպել: Բայց այդ յերկար չտեվեց, և յես նորից ձերբակալվեցի:

— Ե՛ս, հետո՞:

— Այս անգամ յերկար չմնացի բանտում: Նրանք չկարողացան ապացույցներ բերել իմ դեմ, և յերբ աղատ արձակվեցի, նույնիսկ աշխատանք ստացա ԱԵԳ-ում: Հետո որենք դուրս յեկավ ճեռնարկություններում կանանց տղամարդկանց աշխատանքային ուժով փոխարինելու մասին: Մեզ մոտ Փաշխտները սկսեցին մեկ-մեկ արձակել 1935 թվի սկըզբին: Յես այստեղ, Պոմերանիա ուղարկվածներից առաջիններից մեկն եյի... Բայց արդեն ուշ է: Յես պետք է դնամ...

Յերեքն ել վոտքի յելան: Մեկ անգամ ել պինդ, ընկերաբար իրար ճեռքը սեղմեցին

— Յտեսություն, Գրետա՛:

Մոտեբքում վոչ վոք չկար, և Մարդարիտա վալտերը բռունցքը բարձրացրեց.

— Յտեսություն, ընկերնե՛ր: Թուտ Փրո՛նտ:

Յերկար սպասեց Եռնան փողոցի գլխին,
մինչև վոր, վերջապես, հեռվից յերեվաց
Հեծանվով մոտեցող Ֆրիցը։ Հենց վոր նա ցած
թուալ հեծանվից, Եռնան վազեց դեպի նա և
հարցրեց։

— Վորեն բան լսեցի՞ր Գրետայի մասին։
Նրա ձերբակալության մոմենտից վոչ մի լուր
չկա։

— Այո՛, Եռնա, լուր ունեմ։ Այսոր լույս
ուեսավ «Կունդե Գարդե»-յի («Յերիտասարդ
գվարդիա») նոր համարը։


Նա գլուխը ծռեց և բոլորովին ցած ձայ-
նով ասաց։

— Մեր Գրետան սպանված ե...

Լուրթյան մեջ վոչ վոք չլսեց Եռնայի
հեկեկանքը։

— Նա ձերբակալվել եր Ռիխարդշտրաս-
սեյի դատավարության կապակցությամբ։
Նրանից պահանջում եյին հանցանքն ապա-
ցուցող ցուցմունքներ։ Զորս որ նրան տանջե-
ցին, բայց նա հրաժարվեց ցուցմունք տալ։
Այն ժամանակ սպանեցին նրան... դա հոկ-
տեմբերի 21-ին եր։

Եռնան ձեռքով սրբեց աչքերը։
— Ֆրից, ել լաց չեմ լինի։ Հիմա ոչե-
տեմ, վոր պետք է ավելի լավ աշխատեմ,
աշխատեմ այնպես, ինչպես աշխատում եր
Մարդարիտա Վալտերը։





Նեղ սեղանի մի անկյունում դրված և ծխախոտատումիւր: Յոսիփ Ենգելը, առանց նայելու, պարզում է ձեռքը և տուփի մեջ չուշափելով՝ հանում է մի գլանակ: Հետո շարունակում է դրել: Առաջին նամակը — ամենից դժվարը — ծնողներին է ուղղված:

Մի քանի ժամ առաջ նրանք իր մոտ եյին, վերջին անգամ: Այն ժամանակ վո՛չ նա, վո՛չ ել նրանք դեռևս չգիտեյին, վոր առավոտյան նրան մահն եր սպասում: Աղմինիստրացիան խիստ գաղտնի յեր պահել Գամախերի, Վիլմսի, Վեսուերի, Հորչի, Մորիցի և Ենգելի մահապատճի պատրաստությունները:

Դատավճիռն ի կատար ածելուց մեկ որ առաջ, 1933 թիվի նոյեմբերի 29-ին, վեց մահապատճների ծնողները, — մահապատճներ, վորոնցից ամենայերիտասարդը 20 տարեկան եր, իսկ ամենից մեծը՝ 28 տարեկան — հրա-

վիրվել եյին Քյոլնի մոտ գտնվող Կլինողել-պյուցի բանտը: Նրանց առել եյին, թե պետք է հրաժեշտ տան իրենց զավակներին, վորոնց ուրիշ բանտ են փոխադրելու:

Միառժամանակ անց դատապարտվածներն իմացան, վոր վաղվա՛համար նշանակված և իրենց մահապատճիւր:

Շփոթված և կարծես զգալով իր մեղքը նրանց առաջ, անկյունում կանգնած եր քահանան: Յոսիփ Ենգելը վճռաբար բողոքեց տերտերին ուղարկելու դեմ, բայց իր կյանքի նույնիսկ այդ վերջին գիշերը բողոքն անպատճառական մնաց: Այն ժամանակ կալանավորը դադարեց ուշադրություն գարձնել քահանայի վրա: Ասես թե մենակ լիներ սենյակում, Յոսիփը նստած եր սեղանի առաջ և ամենելին չլսելով տերտերի հորդորները, զրում եր: Քահանան յերկար աշխատեց նրան խոսակցության մեջ քաշել: Վերջապես, դադարեցրեց հետագա փորձերը և լոեց:

Ծնողներին ուղղված նամակը պատրաստ եր: Մյուս ազգականներին ուղղված նամակները նույնպես արդեն դրված եյին սեղանի վրա: Կարճ վարանումից հետո մի նոր թերթ վերցրեց: Գրոհայինների մեջ ծանոթներ ուներ, — իր նման բանվորներ: Ահա նրանց կգրի իր մահից մի քանի ժամ առաջ: Այդ խարդած պրոլետարներին են պատկանելու իր վերջին մտքերը: «Լսեցե՛ք սոցիալիզմի հա-

մար՝ մեռնող հակաֆաշիստի վերջին խոսքերը: Զեր ուղին կեղծ ե»:

Գրում ե նա նրանց:

Հետո զալիս են կոմկուսակցության շաբ-քերում միասին աշխատած ընկերներին ու բարեկամներին ուղղված նամակները: Այդ նամակների մեջ Յոսիֆ Ենգելը դնում է իր ամբողջ հոգին, իր վերջին յեռանդը, բոցոտ խանդավառությունը, վորով նա պայքարել ե պլրութարիատի ազատագրման համար: Նը-ըանք պետք է յեռանդով գործեն և նպաստեն այն բանին, վոր պայքարը նզովյալ հիտլերյան ռեժիմի դեմ դառնա ավելի համառ, ավելի վճռական և ավելի անձնուրաց:

Տասնչորս նամակ գրեց այդ գիշեր ՅոսիՓ Ենգելը...



Չնայած աղմինիստրացիայի բոլոր նախագլուխություններին, պատրաստվող մահապատժի լուրը դեռ գիշերով շրջեց բանտում: Կալանավորներն այնպես քողովեցին, վոր աղմինիստրացիան վախենում եր բունտից: Վոստիկանների մի ջոկատ գրավեց բանտի շենքը:

Յերբ առավոտյան ժամը վեցին զանգը հնչեց և դատապարտվածները, զույգ-զույգ շղթայված, չափազանց ուժեղ պահակախմբի ուղեկցությամբ դուրս բերվեցին բակը, քաղ-կալանավորները մաղլցեցին բանտի խուցերի

լուսամուտները, և ամեն կողմից հնչեց պրո-լետարիատի անմահ հիմնը.

«Յելի՛ր, ում կյանքը անիծված ե...»

— Լոե՛ւ...—բղավում եյին բանտապահ-ներն ու վոստիկանները: Բայց «Ինտերնացիո-նալը» շարունակում եր հնչել բակում գրոհա-յինների, դատավորների և դահիճների գլխա-վերեւում: Նա հասնում եր վեց յերիտասարդ մահապարտներին և վկայում, վոր այստեղ ել նրանք մենակ չեն: Յել այդ նրանց ուժ եր տալիս հերոսարար տանելու իրենց կյանքի վերջին ծանր բոպեները:

Դատավճռի ստահու և զրպարտողական տեքստը կարդալու ժամանակ ՅոսիՓ Ենգելն ընդհատեց դատավորին.

— Մենք բաղիտներ չենք, մենք հեղափո-խության մարտիկներ ենք:

Յերբ դատախազը հայտարարեց, թե Հերման Գյորինդը մերժել և ներումն չնորհե-լու միջամտությունը, դատապարտվածները միաձայն բացականչեցին.

— Կեցցե՛ համաշխարհային հեղափոխու-թյունը:

Մահապարտներին զրկելով վերջին իոս-քից, դատավորը հրաման տվեց սկսել մահա-պատիժը:

Դատապարտվածներից մեկին դահիճներն խոկույն բռնեցին և քաշ տվին դեպի կառափ-նատեղին: Դահիճն ամբողջ թափով իջեցրեց կացինը... Գլուխը թռավ: Մահապատիժն

ի կատար ածելուց հետո արյան ժայթքերն ա-
վագով ծածկվեցին։ Նույնպես մեկ թափով
գլխատվեցին յերկրորդն ու յերրորդը։

Բավական քանակությամբ ողին, վոր
խմել եր դահիճն ամբազնդվելու համար, իր
ազգեցությունը ցույց տվեց . . . Կացինը կանգ
առավ չորրորդ դատապարտվածի վոսկրում։
Դահիճը յերկրորդ անգամն և անհաջող խը-
փում . . . Միայն յերրորդ թափից հետո դը-
լուխը թուալ իրանից։

Դա ուժեղ հուզում առաջացրեց նույնիսկ
ներկա յեղող վոստիկանների մեջ, և հարբած
դահիճն ավելի անվատահ դարձավ։ Նա դո-
ղում եր ամբողջ մարմնով, նրա մատները
ջղաձղաբար սեղմում ելին կացնի կոթը։ Հին-
գերորդին նույնպես նա գլխատեց կացնի յեր-
կրորդ հարվածից հետո միայն։

Մահվան դատապարտվածներից վերջինը
մնացել եր յերիտասարդ հեղափոխական Յո-
սիֆ Ենդելը։ Ֆաշիստական դահիճները, վո-
րոնչ առանձնապես ատում ելին Ենդելին, նը-
րան ստիպեցին ականատես լինել իր հինգ ըն-
կերների զարկուրելի մահապատճին։ Նա ան-
վախ քայլեց դեպի կառափնատեղին։ Դահիճի
արյունոտ մի հարված— և հերոսական գլու-
խը գլորվեց ավազի մեջ . . .

Այդ վեց յերիտասարդ բանվորների դա-
ղանական սպանությունը այնքան ցնցող եր
հանդիսականների մեծ մասի համար, վոր

նույնիսկ մի քանի վոստիկաններ ջղաձղական
նոպաներ ունեցան, և ամբողջ վոստիկաններն
ջոկատը բացահայտ կերպով հրաժարվեց հե-
տագայում մասնակցել մահապատիժներին։

33

Հակառակ ամենուրեք տարածված տեռո-
րին, ՄՈՊՌ-ի անլեզալ կազմակերպությու-
նը Գերմանիայում շուտով թուոցիկներ բաց
թողեց կլինդելպյուցի բանտում կատարված
արյունոտ սպանությունների մանրամասն նը-
կարագրությամբ։ Այդ թուոցիկները հար-
յուրներով տարածվեցին Քյոլնում, նրանք
ձեռքից-ձեռք ելին տրվում։ Քաղաքի բան-
վորական ազգաբնակչության մեջ այդ մահա-
պատիժը վիթխարի կատաղություն առաջաց-
րեց։ Շատ կանաչք և աղջիկներ թողին նացիո-
նալ-սոցիալիստական կուսակցության շար-
քերը։

Բանտի հաստ պատերի միջով, սվինների
անտառի միջով դուրս պոռթկացին Յոսիֆ Են-
դելի մահապատճից առաջ արտասանած վեր-
ջին խոսքերը։ Այդ խոսքերը լսեցին խարեյու-
թյան ճանապարհով Փաշիստների շարքերը
գրավված բանվորները, վորոնչ առանց այդ
ել կասկածում ելին իրենց ուղիի ճշտության
վրա։ Յոսիֆ Ենդելի խոսքերը թափանցեցին
հեղափոխական պրոլետարիատի միլիոնավոր
մասսաների մեջ և ել ավելի խտացրին նրա
շարքերը դարձնագույն մարդասպանների դեմ
մղվող պայքարում։



ԹՈՒՂԱՐԱՁԻ ԶԻՆՎՈՐ

— Կամաց, սատանան տանի: Ի՞նչ ես
այդպես շտապում:

— Դու յերեակայում ես, վոր այդ այդ-
քան պարզ ե: Լուսամուտը ժանգտուել ե: Հա-
պա ինքդ փորձիր, և այն ժամանակ կտեսնես:

Անաղմուկ, վոտքի ծայրերի վրա, հա-
մարյա չերեվալով մութ ձեղնահարկի խավա-
րում, յերկու տղամարդու կերպարանքեր
փոխում են տեղերը: Մի վարկյան յերեվում ե
դեպի չեղ լուսամուտը պարզվող ձեռքի ուր-
վագիծը: Այդ ձեռքը զգուշությամբ տնտղում
ե շրջանակը:

Գիշերային լոռության մեջ նորից ե հնչում
լուսամուտի շրջանակի ճռինչը:

— Սպասիր, մի հարվածով ջարդեմ: Թե
չե մինչեւ վաղն ել գլուխ չենք բերի:

Մեկ անգամ ել դեպի սեխն տվող ձեղնա-
հարկի լուսամուտն ե պարզվում մի ձեռք,
բռնում ե սողնակը և ուժեղ սեղմում դեպի
վեր: Լուսամուտն աղմուկով բացվում ե:

— Սատանա'ն տանի, ի՞նչ աղմուկ...

Մի առ ժամանակ յերկուսն ել, չունչը
պահած, ականջ են դնում շրջապատող խավա-

րի լոռությանը: Հետո նրանցից մեկն անցնում
ե նեղ անցքով: Թեք կտուրից չընկնելու հա-
մար նա ստիպված ե ամուր բռնել շրջանա-
կից:

— Տուր դրոշակը:

Կիսախավարի միջից յերեվում ե անձեվ
մի փաթթոց: Կտուրի վրայի մարդը վերց-
նում ե այն: Նա կտուրի վրա փորսող ե տա-
լիս: Քամու թափը քիչ ե մնում նրան ցած-
շպրտի: Նա իրեն պահում ե միայն մի ձեռ-
քով, վորովհետեւ մյուս ձեռքով պահել է
փաթթոցը: Վերջապես, համում ե դրոշակա-
ձողին և ձեռքով չոչափում պարանը:

Գիշերվա կեսին փայտի վրա յերեվում է
կտավը:

Կարմիր լինելով, նա սեվին և տալիս
աստղազարդ յերկնքի ֆոնի վրա: Տժգույն ու
տարասմ փայլում են վոսկեգույն տառերը
դրոշակի վրա:

Մարդը գանդաղ սողում ե դեպի հարկա-
սենյակ (տանիքի տակի սենյակ) լուսամուտը
և մտնում ե հարկասենյակ:

— Պատրաստ ե, — շուկով պատասխա-
նում ե նրան մի ձայն խավարից:

— Այ թե հիանալի կլինի վաղն առա-
վոտյան...

— Իրավացի յես... Բայց մենք սրանով
չպետք ե հանգստանանք: Կարմիր դրոշակը լոկ
աղղանշան ե մի այլ, ավելի դժվարին գործի:

Հիմա պետք է լարենք մեր բոլոր ուժերը, վորպեսզի ջոկատի խոշոր զորամասեր յելույթներ ունենան իրենց ամենորյա պահանջները բավարարելու համար։ Գիտես, չե՞, ի՞նչ ե ասում կուսակցությունը...

— Իհարկե։ Մեր գլխավոր խնդիրն այն է, վոր զինվորական լայն մասսաներին առաջ մղենք այն պայքարում, վոր մղում են նրանք որվա ամենաանհետաձգելի մանր պահանջները բավարարելու համար։ Այդ մասին գրված ենաւ թերթի վերջին համարում...

Հարկասենյակում լուություն ե տիրում։ Բայց լուսամուտից ներս ե լցվում գիշերվասառնորակ ովը...

❀

Առավոտ։

Պարետի բեկերը սարսափից ցցվում են։ Նա չի հավատում իր աչքերին և ապուշ կրտրած սեբեռակի նայում ե կտրան։ Հենց այդպես ել կա։ Նա չի սխալվել։ Զորանոցի կտրանը ծածանվում ե կարմիր դրոշակը։

Նորակոչիկները, բակում շարքի կանոնած, ժպատում են։ Այդ բոպեյին նրանց վրա վոչ վոք ուշադրություն չի դարձնում։ Նըրանք կարող են նույնիսկ խոսել իրար հետ։

— Այսպիսի պրյումի յերելի չեյիր սպասում, չե՞։

— Այդ ի՞նչպես ե հաջողվել նրանց։

— Յես դեռ առաջ ել լսել եյի, վոր Պլով-

դիվի իններորդ հրետանային գունդը կարմիր է, բայց չեյի հավատում...

Վերջապես, հրամանատարը վորոշում է ընդունում։ Նա դիմում ե նորակոչիկների հավասարված շարքին։

— Դեպի՝ զորանոց...

❀

Զինվորները վեր են թռչում թախտերից և շարք կանգնում։ Շենքն ե մտնում հրամանատարը մի քանի սպայի ուղեկցությամբ։

— Այս խայտառակության մեղավորներն անմիջապես առաջ դա՛ն, — հնչում ե հրամանը։

Վոչ վոք տեղից չի շարժվում։

— Անիծված չնե՞ր։ Բոլորիդ կշղթայեմ, յեթե չասեք, թե ո՞վ ե մեղավորը։ Թարձյալ լուություն...

Հրամանատարը շնկում է սպաների հետ։ Հանկարծ նրա դեմքը պայծառանում ե։

— Պարզե՞լ ձեռքերը։

Սպաների խումբը շրջում ե զինվորների առջևով, ուշադրությամբ զննելով յուրաքանչյուրի պարզված ձեռքերը։

Կոշտ, չորացած ձեռքեր, վոր վկայում են ծանր աշխատանքի մասին։ Բանվորների և գյուղացիների ձեռքեր։ Նրանցից մեկի յեղունդների տակ ինչ-վոր բան փայլեց։ Չնայած խնամքով լվացված լինելուն, յեղունդների տակ մի քիչ մնացել եր այն վոսկեգույն

փոշին, վորով պատված եյին դրոշակի տառերը:

— Պյոտր Վելչև: Ուրեմն այդ դու յես յեղել, շան վորդի: Յեվ կհատուցես:

Յերկու զինվոր հրացաններն ուսին տառում են քսան յերկու տարեկան զինվոր Պյոտր Վելչևին:

§§

— Այս ի՞նչ բան ե,—զինվորը զարմացած նայում ե թղթի թերթը, վոր գտնում է իր թախտի վրա՝ արշավանքից վերադառնալիս:

Նիկոլան վերցնում ե թուղթը: Նրան շրջապատում են զինվորները: Նրանք նույն պես իրենց ձեռքին ունեն այդպիսի թոռուցիկ ներ:

Յես նոր զուգարանումն եյի: Այնտեղ ել պատին այդպիսին կա փակցրած:

Նիկոլան սկսում ե կարդալ. «ընկեր զինվորնե՛ր... Մե՛ր սիրելի ընկեր Պյոտր Վելչև Փաշիստական զինվորական դատարանի կողմից մահվան ե դատապարտված: Մեր զորանոցի կտրան դրոշակը մի ազդանշան եր ուժեղացնելու այն պայքարը, վոր մենք պետք ե մղենք: Այդ պայքարում Պյոտր Վելչևը միշտ գնում եր առաջին շարքերում... Նա միշտ պայքարում եր մեր իրավունքների համար...»

Կարդացողին ընդահատում են բացական չությունները.

— Ճիշտ ե, նա միշտ հոգում եր մեր մասին և ոգնում եր մեզ...

— Հիշո՞ւմ ես, յերբ նեխած միս տվին, նա նույնպես...

— Յերբ լեյտենանտը Յորդանի յերկու ատամները փշրեց, նա, Պյոտրը, իսկույն ասաց...

— Իսկ ի՞նչպես եր պնդում, վոր զորանոցի ողը փոխեն:

— Կամաց, թողեք կարդա:

Նիկոլան շարունակում է. «...և դրա համար, ընկեր զինվորնե՛ր, մենք բոլորս պետք ե հանդես դանք պաշտպանելու Պյոտր Վելչևին: Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար: Թույլ չտա՛նք սպանել Պյոտր Վելչևին»:

Դարձյալ աղմուկ ե բարձրանում:

— Մենք պետք ե վորելիք բանի ձեռնարկենք...

Ազատություն Պյոտր Վելչևին:

§§

Հրամանատարը դժվարին դրության մեջ է: Նա շփոթված շարժվում ե կալանավորի խուցում աթոռին նստած, նրա աչքերի արտեանունքները հուզմունքից ցնցվում են:

Վերջի վերջո խոհեմ յեղի՛ր, Վելչևի: Պարզապես չեմ կարող հասկանալ, թե ինչո՞ւ չես ուզում ստորագրել դիմումը:

Պյոտորի դեմքը խիստ և ինքնանվուզի
արտահայտություն ստացավ:

— Դուք ծեծեցիք և խոշտանգեցիք ինձ,
վոր մատնեմ իմ ընկերներին... Յես վոչ վո-
քի չժամանեցի: Դուք ինձ մահվան դատապար-
տեցիք այն բան համար, վոր յես կոմունիստ
եմ ու բանվոր, հիմա ել ուղում եք, վոր թո-
ղություն ինդրեմ: Վո՞չ:

Նա բղավում է ուղղակի հետ-հետ գնա-
ցող հրամանատարի յերեսին:

— Յես թողություն չեմ խնդրի: Յես
արդեն ասացի ձեզ, թե ի՞նչ եմ ուղում: Հա-
վաքեցեք ամբողջ զորախումբը և ինձ գնդա-
կահարեցեք զինվորների աչքի առաջ:

§§

— Ռազմադաշտային դատարանի պարոն
անդամ, յես կարող եմ միայն կրկնել այն,
ինչ արդեն հաղորդել եմ իմ գրավոր զեկու-
ցագրում. տրամադրությունը զինվորների
մեջ այնպիսին ե, վոր դժվար է վորեվե բանի
համար յերաշխափորել, յեթե դատավճիռն ի
կատար ածվի:

Հեռախոսալարի մյուս ծայրից գալիս և
հուզված էի վնչոց.

— Բայց ի սեր աստուծո, պարոն կապի-
տան, ի՞նչ անեմ:

Նա չի ուղում ստորագրել բարձրագույն
ինստանցիային ուղղված խնդրագիրը:

— Միք մոռանա, ինդրեմ, վոր մենք յե-

րեկ զորանոցում դարձյալ դտանք անլեզար
թերթի մի համար: Մենք ձերբակալեցինք
մի քանի զինվորի: Վոչ վոք իբր թե վոչինչ
չդարի... Յես ուղակի հուսահատության մեջ
եմ:

— Լավ, յես կխոսեմ պարոն զինվորական
մինիստրի հետ:

§§

Վերջապես, նիկոլային հաջողվում է իր
խոսքը լսելի դարձնել.

— Այդպես մի՛ գոռացեք, տղերք, թե չե
չեմ շարունակի կարդալ:

Զինվորների ուրախ բացականչություն-
ները լուսմ են, և նիկոլան շարունակում է.
«Մահապատիժը, վորին դատապարտված եք
Պլովդիվի իններորդ հետևակ գնդի զինվոր
Պյոտր Վելչևը կոմունիստական պրոպագան-
դի մեղադրանքով, փոխարինված է ցմահ
տաժանակիր աշխատանքով»:



ԱՐԿԱՆՁԱՍԻ ՓՈԹԹԻԿ ԲԱՂԱՔ

Ամբոխն ավելի ու ավելի յե մոլեգնում։
Ում վոր սուր ձայնը խլացնում է մյուս բոլոր
ձայները։

— Մա՛հ կարմիրներին։

Զահերի լույսի տակ չարագուշակ փայ-
լում են սպիտակ վերարկուները և յերեսի վը-
րա քաշված կնդուղները (վեղարները), վո-
րոնց վրա ուժգին աչքի յեն ընկնում աչքերի
համար շինված մութ կտրվածքները։

Բլիտվիլի շերիքը, վոտքերը լայն լայ-
արած, կանդնած ե բանտի դռան առաջ։ Նրա
դեմքի վրա ցրվում ե ժպիտը։ Մտածմունքի
մեջ խորասուզվածնա դիտում ե սպիտակ կեր-
պարանքների յեռուզեռը, վորոնք շրջապա-
տում են իրեն, մոլեզնում, թափահարում ջա-
հերը, բարձրացնում ձեռքերը։ Յեվս մի քա-
նի վայրկյան, և նա մեկ կողմն ե քաշվում։

Բանտի դուռը լայն բացվում ե, և ամբո-
խը հեղեղի պես լցվում ե բանտի բակը։ Շե-
րիքը գնում ե առջևից, մարդկանց ճանա-
պարհ ցույց տալով։

Խուցը արդեն բացված է։ Անկյունում

կծկված պպղել ե յերիտասարդ մի բանվոր։
Նրա աչքերը սարսափից լայնացել են։ Շըն-
չառությունն արագացել է։ Աղաղակներն ու
վոտքերի դոփյունը գնալով մոտենում են...
— Այստե՛ղ, կտրիմնե՛ր, նա այստեղ է...»

Կալանավորին կոպիտ կերպով բռնում ու
քաշ են տալիս։ Հարվածների կարկուտ ե տե-
ղում անպաշտպան այդ եյալի վրա, յերբ նը-
րան սանդուխքով քաշ են տալիս բակը։

— Մենք քեզ ցույց կտանք, թե ի՞նչպես
կազմակերպել սեամորթներին, — բղավում են
գաղանացած ձայները։

— Ի՞նչպես ես դու համարձակվել սպի-
տակամորթ տեղովդ կապվել սեամորթ անա-
սունների հետ։

Հարվածներից արդեն անզգայացած զո-
չին նրանք կապում են ավտոմոբիլին։ Միաց-
վում ե մոտոուր։ Զահերը ձեռքերին բռնած
սպիտակ կերպարանքներով շրջապատված
ավտոմոբիլը դանդաղ շարժվում ե տեղից։

Ավտոմոբիլը կապված պատանուն մի
քանի մետր քարշ ե տալիս գետնի յերեսին,
հետո պատանին, որորվելով, վոտքի յե-
կանդնում և վազում մեքենայի հետեւից։

Ահա քիչ ե մնում, վոր նա վայր ընկնի,
բայց պինդ ձգված պարանը նրան առաջ ե քա-
շում։ Ամբոխը քչում ե նրան հրացանների
կոթերով և գավաղաններով։

Ահա նրանք քաղաքի ծայրամտսերումն

Են: Անտառի յեղք: Զահերը լուսավորում են սարսափելի մի պատկեր: Ծառից մի նեղք է կախված: Նրա յերիտասարդ դեմքը ծոմովել ե անմարդկային տանջանքներից: Բերնից կախ է ընկել կապտած լեզուն: Վտաքերը կծկված են դեպի վեր, բայց այդ չի ոգնել, ցածում վառված խարույկը վոտքերն այրել է մինչև ծնկները:

— Ա՛յ, տե՛ս: Քո բարեկամներից մեկն է կախված — կապված մարդու յերեսին բղավում ե շոփերի կողքին նստած շերիֆը:

— Նրան կախել կողքին, — անցնում ե աղմտուկն ամբոխի միջով:

— Վո՞չ, պետք ե կպրով ծեփել և փետրադրդել, — բղավում են մյուսները:

Ավտոմոբիլը կանգ է առնում: Մեկ ակընթարթում պատանու մարմնի վրայից պոկում են հագուստները: Մի քանի մարդ բարձրանում են ավտոմոբիլը և դուրս են գլորում տաք կպրով լցված տակառը: Յեռացող զանդվածով նրանք ծեփում են անպաշտպան յերիտասարդին, հետևելով, վոր մարմնի վոչ մի մասը չմոռացվի, նույնիսկ աչքերը, բերանը և ականջները:

Նա դեռևս փորձում ե ուղղվել և կրքոտաբար բացականչում ե.

— Կեցցե՛ հեղափոխական արհմիությունը, — բայց կուպը լցվում ե նրա քիթն ու բերանը: Նահատակի ճիշերը թուլանում են և

շուտով բոլորովին լուս: Նա գիտակցությունը կորցնում է:

Այժմ դազանացած ամբոխը նրա վրա փետուրներ ե թափում, վայր է նետում և նրա մարմինը վոտքի հարվածներով գլորում գետնի յերեսին: Փետուրները կպչում են կպրին, և չուտով գետնի վրա պառկած կերպարանքի մեջ մարդն անձանաչելի յե դառնում:

Մեկ անգամ ել ցնցվող մարմնի վրա տեղում ե ձեռքի և վոտքի հարվածների տարափը: Հետո ամբոխը ցըվում է: Ամեն ինչ խաղաղվում է:

Մի քանի ժամ անց թիերի մեջ խշրառց ել լսվում: Ինչ վոր մարդիկ կամաց սողոսկում են դեպի հեծեծացող պատանին և տանում են նրան:

— Սատանան տա՞նի: Ինչի՞ համար ենք ձեզ չերիֆ նշանակել:

Բլիսվիլի չերիֆի սենյակում նստած են մի քանի պլանտատորներ: Նրանք հուզված խոսում են:

— Գործադուլը շարունակվում է արդեն յերկու ամիս, և յեթե վոչինչ չպատահի, մենք ստիպված կլինենք տեղի տալ: Վերջապես, չերիֆը վորոշեց խոսել.

— Զգիտեմ, թե ել ի՞նչ կարելի յե անել: Յերբ այդ բանդան սկսեց միանալ այդ նզով-յալ «Մանր արենդատորների հարավային»

միության» մեջ, մենք մի քանի կարմիրների
կոլով ծեփեցինք և փետրազարդեցինք...

Արենդատորները համակրաբար որորում
են գլուխները:

— Դրանից հետո նրանք բոլորը վոնդվե-
ցին շրջանից: Չեմ հասկանում, թե ի՞նչպես
բայց, չնայած դրան, այժմ Բլիտվիլում
բանվորների և արենդատորների իննուուն տո-
կոսը կազմակերպված է միության մեջ:

Պլանտատորներից մեկը նրան ընդհատում
և զայրութից դողացող ձայնով.

— Ապա մեկ պատկերացրե՛ք, սպիտակ-
ները միանում են սեամորթ անասունների
հետ...

Շերիֆը շարունակում է.

— Այո՛, այդայդպես ե: Բայց համաձայն-
վեցեք, վոր այդ իմ մեղքը չե: Դուք չեք կա-
րող նաև ինձ պատասխանառու դարձնել դոր-
ծադուլի համար: Մենք արդեն իսկ լինչի դա-
տաստանի յենք յենթարկել չորս կարմիր ա-
ռաջնորդների: Այժմ նրանք կարող են դործա-
դուլներ կազմակերպել միայն գժողքում:

Ընդհանուր ծիծաղը խլացնում ե նրա
խոսքերը:

— Բայց դործադուլը շարունակվում է:
Զգիտեմ, թե ել ի՞նչ կարող եմ անել: Տղեր՝
քը ամուր կապված են և իրար ոզնում են:

Դեռ յերկար խորհրդակցում են պլանտա-
տորները և մի քանի անդամ բանը հասնում

կրքոտ վեճերի, մինչև վոր հանգում են վո-
րոշ վճռի: Վերջապես նրանց միջև համաձայ-
նություն կայացավ: Գործադուլավորների
առաջադրած պահանջների մի մասը պետք ե
րավարարվեր:

— Իսկ հիմա, պարոնա՛յք, յես ձեզ կարող
եմ ուրախացնել, — խոսում ե դարձյալ շե-
րիՓը: — Դուք դիտեք, վոր հունվար ամսին
ինձ վրա կրակեց մի սեամորթ անասուն: Յես
այն ժամանակ ձերբակալեցի յերկու տղայի՝
Կլեյտոնին և կարուտերին: Դժբախտաբար,
չկարողացա նրանց ստիպել խոստովանելու:
Աստված վկա յե, բավական ծեծեցի նրանց:
Բայց նրանք լոկ բացականչում եյին իրենց
լոգունզները սեամորթ և սպիտակամորթ
բանվորների ընդհանուր պայքարի մասին:
Յես արի այն ամենն, ինչ ինձանից եր կախ-
ված, բայց նրանք իրենց մեղագոր չձանաչե-
ցին, իսկ ապացույցներ յես ել վոչ մի կերպ
չկարողացա ճարել:

— Ե՛ւ, վոր ի՞նչ, — անհամբեր ընդհա-
տում ե մի պլանտատոր:

— Հիմա բոլորովին այլ ե: Մի կին...

Ա՛ւ, հասկանալի յե: — քրքջաց ունկըն-

դիրներից մեկը:

— Մի սպիտակամորթ կին, պարոնա՛յք,
պատրաստ ե վկայություն տալ, վոր գերեզ-
մանոցում իր վրա հարձակվեցին սեամորթնե-
րը և բռնաբարեցին...

Քնկոտ հակվում են յերդվյալների դլուխ-ները, և նրանց անմիտ հայացքները ձբջում են սենյակում։ Միապաղաղ հնչում ե դատարանի նախագահի ձայնը.

— Տիկին Տերըի ցուցմունքները, իհարկե, դատարանի համար ավելի մեծ նշանակություն ունեն, քան չոքս վկաների հավաստիացումները, վորոնք պնդում են, թե հիշյալ յերեկոյան յերկու մեղադրյալները նրանց հետ թուղթ եյին խաղում և հեռու եյին դեպքի վայրից։ Այդ չոքս վկաները նույնպես նեղրեր են։ Հասկանալի յե, վոր նրանք աշխատում են աջակցել վոճառագործների արդարացմանը... Այս հիման վրա յես Ռաբլ Կլեյտոնին և Զիմ Կարուտերին մահվան եմ դատապարտում...»

Ժողովի նախագահության մեջ նստած են սեսամորթ և սպիտակամորթ բանվորներ։ Խոսում ե մի սպիտակամորթ։ Բարձր հնչում նրա ձայնը.

— Յեվ դրա համար, ընկերնե՛ր, անհրաժեշտ ե ուժեղացնել պայքարը յերկու անմեղ յերիտասարդ նեղրերի ազատության համար... Արկանդասի դերագույն ատյանը նոյեմբերի 20-ին հաստատեց մահվան դատավճիռը... ՄՈՊՐ-ի կազմակերպությունն Ամերիկայում միասնական ճակատ ե ստեղծել «սեսամորթների պաշտպանության ազգայի»

ասոցիացիայի» և մի շաբք նեղրական ընկերությունների հետ։ Այդ միասնական ճակատը պետք ե հազարավորներին և տասնյակ հազարավորներին կազմակերպի պայքարելու կլեյտոնի և Կարուտերի ազատագրման համար։





ՈՎԻԵՌՈՅԻ ԱԻ ՊԱՆ

Գնդացրի համաչափ ճարճատյունը հանկարծ ընդհատվեց։ Մրից սեացած մատները, վորոնք սեղմում են գնդացրի վայրիջույց լըծակը, թուլանում են։ Զեռքը զանդաղ ընկնում ե ցած և սեղմվում կրծքին։ Մատները մեկ անգամ ել են ջղաձգաբար սեղմվում։ Մրի միջից ծորում ե արյունը։ Զեռքը քարանում ե անշարժ։

Աիդան վախեցած ծովում ե ընկերոջ վրա։ Մազերի խճճված մի փունջ թափվել է ճակատին։ Կտրուկ շարժումով նա մազերը հետ ե ձգում։

Ընկերը մեռած ե։ Նա անշարժ պարկած է մյուսների կողքին։ Աիդա լաֆունդեն մենակ ե մնացել մեռելների մեջ։

Մի ակնթարթ նա չգիտեր, թե ինչ անի։ Դեռ նրա ձեռքումն ե փամփուշտների մի պահումակը, բայց գնդացրը լուսում ե։

Աիդան իր շուրջն ե նայում։ Նա տեսնում է իր շուրջը ընկերների կուշ յեկած դիակները, նող նեղ ձորակը։

Ոտարերկրյա լեզեռնի վախկոտ չնե՛ր։ Մինչև այժմ, չնայած վերջին կրակոցին հետեւվող լուսությանը, նրանցից վոչ վոք չի համարձակվել գլուխը դուրս հանել։ Յեվ մի՞թե այդ ոռւս սպիտակ գվարդիականներից կարելի յէ արիություն սպասել։

Աիդան նորից ե պահվում գնդացրի վոչ մեծ վահանակի հետեւվը և բռնում ե վայրիջույց լծակը։ Լուսությունը ճնշում ե նրան, բայց նա պետք ե պահպանի փամփուշտները։ Դրանք վերջինն են։

Հիմա նրանից ե կախված բազմաթիվ մարդկային կյանքերի բախտը։ Նա իր հիշողության մեջ մեկ տնտղում ե վերջին ժամերի էրադարձությունները։ անողոք պայքարը, վոր բռնկվեց 1934 թվի հոկտեմբերի 14-ին Ովկիեղոյում, յերբ աստուրիական կարմիր բանակը ստիպված եր յեղել պաշտպանվել գեներալ Լոպեց Ոխառյի 40,000 զինվորներից։

«...Մենք նահանջում ենք դեպի հանքերի և հանքահորերի շրջանը։ Դուք ձեր վրա ծանունդիր եք վերցնում։ Այստեղ գնդացրի մոտ դուք պետք ե դիմանաք, ինչքան ուժերդ կրավականացնի... դրանից ե այժմ կախված կրավականացնի...»

ամեն ինչ։ Դուք պետք ե խանդարեք սպի-
տակներին իսկույն հետևելու մեզ։ Մենք
հույս ենք դնում ձեր արիության վրա...» —
այդպես եր հրահանգը։ Արագ, առանց մի
բոպե կորցնելու, հարկավոր եր քննարկել
ամեն ինչ։ Տասը կոմյերիտականներ Ա.իդայի
հետ միասին մնալով Ովիեղոյի հյուսիսային
կայարանի մոտ գտնվող ձորակում, գիտեն,
թէ ի՞նչ պետք ե անեն։

Տեղը հաջող եր ընտրված կարմիր բանա-
կի նահանջը պաշտպանելու համար։ Մի քանի
ժամ շարունակ կոմյերիտականներն իրար հե-
տեղից հետ ելին մղել ոտարյերկրյա լեզեռնի
դրուները։ Իրար հետեից ընկերներն ընկել
ելին։

Ա.իդան վերջինն եր...

Հետեվում, փողոցի շրջադարձում, ուր
պահված ե թշնամին, զդուշությամբ յերե-
վում ե մի գլուխ։ Ա.իդայի փոքրիկ աղջկա նը-
ման նիհար մարմինը ցնցվում ե։

Լությունը սիրո ե տպիել լեզեռներին։
Նրանք սկսում են կամացուկ սողալ դեպի
գնդացիրը։ Ա.իդան սպասեց, մինչև վոր
նրանք մոտեցան բավարար տարածության
վրա, և սեղմեց վայրիջույց լծակը։ Տրատա-
տատա, — աշխատեց գնդացիրը։ Իրար հե-
տեից, ասես հնձվելով, վայր թափվեցին

Դրանք վերջին դնդակներն ելին։

Լեզեռներից մեկը բղավում ե.

— Դադարեցրու կրա...

Գնդակը, Ա.իդայի գնդացը վերջին գըն-
դակը կտրում ե խոսքը լեզեռների բերնում...

Այդ խոսքն այլևս յերբեք չի արտասանվի։

Գնդացիրը դարձյալ լուց։ Նահանջելու
պատրաստված լեզեռներները կանգ առան։
Քսան հոգի սվինները հորիզոնադիր նետ-
վեցին դեպի Ա.իդան։

Այլևս միտք չունի պահվել գնդացը ի-
վահանակի հետեւ։ Ա.իդան վոտքի յե կանգ-
նում, դուրս ե գալիս գնդացը հետեից։ Նա
բաց ե անում բլուղի կուրծքը։

— Դե՛մ, սպանեցե՛ք ինձ, վողորմելի
վախկոտնե՛ր, ի՞նչ եք սպասում...

Յերկու վոստյուն գործելով լեզեռներ-
ները մոտենում են։ Ա.իդան նայում ե նրանց
արնակալած աչքերի մեջ։ Ա.իդայի շրթունք-
ներն արհամարհաբար սեղմված են։ Վերջին
անգամ նա հետ ե նետում ճակատից մազերի
անհնապահնդ փունջը։

Բարձր և հստակ հնչում են Ա.իդայի
վերջին խոսքերը.

— Կեցցե՛ հեղափոխությունը։ Կեցցե՛
կոմունիզմը։

Մի քանի սվին միաժամանակ խրվում են
նրա կուրծքը։ Նա դանդաղ իջնում ե գետնին։

Աիդայի աչքերը լայն բացված են: Վերջին
մարող հայացքը նա հառում է Աստուրիայի
վառ-կապույտ յերկնքին:



Առաջին որն ամենից դժվարն եր: Յերբեք
Անտոնիոն չեր հավատա, վոր այն ջրալի
շիլան, վորով իրեն կերակրում եյին ահա ար-
դեն տասնչորս որ, կարող ե այդպիսի քար-
շողական ուժ ունենալ:

Այսոր առավոտյան նա սննդաղուլ հայ-
տարարեց և այդ մասին իրազեկ դարձրեց իր
բանտապահին: Հիմա նա պառկած է կեղտոտ,
պատառոտված ներքնակի վրա «Լա Կաբանա»
բանտի ստորյերկրյա խուցում և աշխատում է
չնայել ապուրամանի կողմը, վորը, չնայած
նրա բողոքներին, խուցումն է թողել վերա-
կացուն:

Մեկ անգամ ել նա մտքովն անց ե կաց-
նում վերջին որերի իրազարձությունները:
Նրան թվում ե, վոր արդեն անսահման շատ
ժամանակ է անցել այն որից, յերբ նա պիո-
ներների իր խմբի հետ կազմակերպեց Հավան-
նայի*) դպրոցականների գործադուլը: Նրանք
դպրոցից դպրոց եյին դնում և յերեխաններին

*) Գլխավոր քաղաքը Կուբա կղզում:

դուրս բերում դասարաններից։ Սպիտակա-
մորթ և սևամորթ յերեխանները սեղմ շար-
քերով քայլում եյին փողոցում։ Նրանց թիվը
զնալով ավելանում եր։ Գործադուլն ընդհա-
նուր դարձավ։ Ուսուցիչները նույնպես գոր-
ծադուլ հայտարարեցին։ Դալրոցականները
պահանջում եյին տաք նախաճաշ և ձրի դա-
սադրֆեր ու տետրակներ, ուսուցիչները՝
ամիսներով չտրված աշխատավարձի վճա-
րում։

Հետո շարժմանը միացան պետական ծա-
ռայողները։ Իսկ մի քանի որից հեղափոխա-
կան արհմիությունների հայտարարած դըլ-
լավոր գործադուլն արդեն համակեց հար-
յուր հաղարավոր բանվորների և ծառայող-
ների։

Հավանայի բուրժուական թաղամասերից
մեկում ցույցի ժամանակ գործադուլավորների
և զինվորների միջև ընդհարում տեղի ունե-
ցավ։ Ուրիշների թվում ձերբակալվեց նաև
կոմյերիտական Անտոնիո Արչեն։

Զինվորները նրան տարան «Լա Կաբանա»
բերդը և նետեցին մութ նկուղը։ Տասնչորս որ
վոք չեր հարցաքննել նրան, մեղադրանք չեր
մննդադուլ հայտարարել։ Այն ժամանակ նա վորոշել եր
Դանդաղ սահում եր ժամանակը։ Հակա-
մակ իր կամքին Անտոնիոն տենչալի հայցք
եր նետում խավարի մեջ հաղիվ նշմարվող

44

կերակուրով լեցուն ապուրամանի վրա։ Հետո
նա վճռականապես վեր կացավ և կերակուրը
թափեց անկյունը։ Հիմա նա շատ ավելի
հանդիսաւ եր, թեև քաղցած ստամոքսն ա-
ռաջվա պես կծկվում եր։ Կեսորին նա ուժ-
ունեցավ վճռականորեն հրաժարվել ճաշից։
Զբոսանքի ժամանակ ընկերոջ ականջին շշու-
ջաց, վոր աննդադուլ և սկսել։ Բայց վերակա-
ցուն բղավեց նրա վրա, և ընկերը չկարողա-
ցավ պատասխանել նրան։

Հետո, որվա մնացած մասում Անտոնիոյի
մտքերն ակամա վերադառնում եյին ուտելի-
քին։ Նրա յերեխակայության առաջ գծվում եր
ամեն տեսակ կերակուր։ Առաջ հաճախ եր
պատահել անցկենալ Հավաննայի հարուստ
թաղամասերով։ Հիմա նա պատկերացնում եր
այն ուտելիքները, վոր այն ժամանակ տեսել
եր ցուցավեղիկերում։

Մյուս առավոտյան նա իրեն թուլացած
զգաց և որվա մեծ մասը թախտի վրա պառ-
կած մնաց։ Վոչ վոք չմտավ նրա խուցը։
Բանտապահը նույնիսկ զբոսանքի դուրս չը-
բերեց նրան։

Եերբորդ որը Անտոնիոն սկսեց սուր ցա-
վեր զգալ ստամոքսում։ Նա աչքերը փակ
պառկած եր թախտի վրա և հառաչ եր ար-
ձակում։

Կեսորին յեկավ բանտապահը և նստեց
նրա անկողնի վրա։

45

— Գիտե՞ս, թե ինչ ոյին հանեցիք: Քեզ-
նից հետո սննդաղուլ հայտարարեցին «Լա-
կաբանա»—յի բոլոր քաղաքական կալանա-
վորները: Զգիտես ինչպես այդ իմացել են
Հավանայում, և այսոր թերթերն արդեն
բղավում են այն մասին, վոր այնտեղ ել հինգ
հարյուր քաղաքական կալանավորներ սննդա-
ղուլ են հայտարարել: ՄՈՊԲ-ը թուցիկներ
երաց թողել:

Այս լուրն ամբացրեց նրա դիտավորու-
թյունը շարունակելու պայքարը: Հիմա նո
գիտեր, վոր ազատության մեջ գտնվող ըն-
կերները գիտեն իր սննդաղուլի մասին:

Չորրորդ որը նա եւ ավելի թուլացավ,
լայց ցավերը՝ դադարեցին: Նա իրեն ազատ
ու թեթև եր զգում, ինչպես յերրևիցե:
Քաղցը նրան արդեն չեր տանջում, և նա
ամենեին չեր մտածում ուտելիքի մասին:

Անսպասելի կերպով խուցի դուռը լայն
բացվեց, և մի քանի հոգի ներս մտան:
Նրանցից մեկը նրան պարզեց մի բաժակ կաթ:
Անտոնիոն բացասարար գլուխը շարժեց:
— Խմի՛ր, — ասաց նա նրան, — հիմա դու
ազատ ես:

Մյուսն ավելացրեց.

— Մենք քեզ ազատում ենք, վորովհետե-
ղեու շատ ջահել ես:

— Վո՛չ, ճիշտ չե, վոչ թե նրա համար,
վոր ջահել եմ, այլ նրա համար, վոր դուք

վախենում եք բանվորներից, — ընդհատեց
նրան Անտոնիոն:

88

Յերբ նավակը, վորով Անտոնիոյին
բանտից տանում եյին Հավանա, մոտեցավ
ափին, նա տեսավ, վոր ափին բազմություն
եր հավաքվել: Մարդեկ ինչ վոր բան եյին
բղավում: Յերբ նավակը մոտեցավ, նա լսեց
հետեւյալ խոսքերը.

— Կեցցե՛ մեր հերոս Անտոնիոն: Ուոա՛:





**ՅՈՒՆԿ-ԴԻՆՅԻ
ԳՅՈՒՂԱԾԻՆԵՐԸ**

Յերբորդ որը յերկուսն ել մեռան։
Նրանցից մեկի, Զան-Շինի լավագույն ըն-
կերոջ, տասնինն տարին նոր եր լրանում։
Նախքան ճանապարհը շինելը, գյուղացի-
ները պետք ե չորացնելին հողը։ Նրանք մինչև
ծնկները խրվում եյին փափուկ կավի մեջ,
և որական տասնվեց ժամ արեն անխնա այ-
րում եր նրանց գլուխները, թուլացնելով
ուղեղը։

Մինչ ճապոնացի սպաները տանը նստած
բրնձի ողի եյին կոնծում, մանջուրացի զինա-
փորմերը բավական տանելի վերաբերմունք
եյին ցույց տալիս գյուղացիներին։ Բայց յերբ
սպաններից մեկնումեկը յերեռում եր, զինվոր-
ները, պատժից վախենալով, ոկում եյին
կոպիտ վարվել գյուղացիների հետ։ Դրա
համար ել վոչ վոքի չեր զարմացնում այս
հիներ եյին մեռնում։
Լառ-Մենը տնքալով ուղղվեց և իր ծեր,

Խորշոմած դեմքը դարձրեց Զան-Շինին։
— Մեր յեղայրներից լուր ստացե՞լ
ես, — Հնջաց նա։
— Վոչ, արդեն յերեք որ ե վոչ վոքի չեմ
տեսնում։
Նրանք դարձյալ ծովեցին աշխատանքի
վրա։

33

Յերկու ճապոնացի սպա քայլում եյին
գյուղի փողոցով։ Նրանց դեմ դուրս վագեց մի
փոքրիկ աղա։ Նա ողապարիկ եր բաց թող-
նում և այնքան տարված եր, վոր չնկատեց
սպաններին։ Պատահաբար նա փակեց նրանց
ճանապարհը։ Նրանցից մեկը վոտքի մի հար-
վածով նրան մեկ կողմը շպրտեց։ Յերեխան
լաց լինելով պառկած մնաց կավաշեն խրճիթի
մոտ։

— Կեղտո՞ւ սերունդ, — նկատեց սպան
ստամերի միջով։

— Ինձ այլ բան ե անհանդստացնում, —
շարունակեց ընդհատված խոսակցությունը
յերկրորդը։ — Զինվորները, թվում ե, ան-
հուսալի յեն գառնում։ Կարմիր բանդիաների
դեմ ուղարկված պահակախմբերը ձեռնունայն
վերադարձան։ Այնպես ե յերեռում, վոր վորմե-
կերպ միացել են նրանց։ Շինարարության
վրա գտնվող գյուղացիները լկտիանում են,
իսկ զինվորները հարկ յեղած խստությունը
չեն ցուցաբերում։

— Այսոր ճապոնացի կավիտանը սպանեց լինկ-վուլի կնոջ,— շնչաց իր հարևանին Զան-Շինը: Վերջինս եւ ավելի իջեցրեց գլուխը և բահն ուժգնությամբ խրեց կավի մեջ:

— Նա բրնձի արան եր հերկում: Կապիտանը մոտեցավ և սկսեց հայսոյել այն բանի համար, վոր նա շինարարության վրա չի: Նա հայտարարեց, թե ստիպված ե հերկել իր յոթը յերեխաներին կերակրելու համար չենց դրա համար ել նրան զնդակահարեց:

Այդ դազանական փաստը շուտով Հայտնի դարձավ բոլոր գյուղացիներին, վորոնք ամենածանր հարկադիր աշխատանքն էյին կատարում սազմական ճանապարհաշինարարության գծով: Համբերության բաժակը լցվեց: Յերր մոտեցավ ճապոնացի սպան և նրանց մեջքերի վրա չաչեց բամբուկի դավազանը, Լառ-Սէնը բղավեց.

— Ոտարյերկրյա չո՛ւն, դեռ յերկա՞ր պիտի մեզ տանձես:

Զինվորները տարան տասնյոթ գյուղացու: Գյուղում բանտ չկար, և նրանց բոլորին միասին փակեցին մի կավաչեն խրճիթում: Սպայի հրամանով խրճիթից դուրս բերին ամեն ինչ, մինչև իսկ խսիրները: Կարանավորները սեղմ նստած, եյին կեղտոտ հատակի վրա:

— Ի՞նչ գիտես կարմիրների մասին,— Հարցնում ե սպան:

Զան-Շինը հեծեց: Սպան վոլորում ե նրա մասները: Մատների արանքում խրված են բանբուկի ձողեր: Խվում ե ջարդուվող վուկորների ճռճողը: Տրաքում ե կաշին և արյուն ե գալիս:

— Յես գիտեմ, վոր կապ ես պահում կարմիրների հետ:

— Սիալ ե: Յերբեք նրանց հետ չեմ յեղել, — հառաչում ե Զան-Շինը:

— Վաղը ձեզ բոլորիդ կգնդակահարենք: Յեթե ասես, թե լեռներում ո՞ւր են պահված կարմիրները, կյանքդ կշնորհեմ, — հանկարծ տոնը մեղմացնելով ասում ե սպան:

— Ի՞նչ կարող եմ ասել, յերբ վոչինչ չգիտեմ, — պատասխանում ե Զան-Շինը:

— Զան-Շինն ինձ ասաց, վոր մենք նրանց կզտնենք յերեք ուռենիների մոտ գետի գարձավածքում, — շնչում ե փոքրիկ լին զինվորներին:

Այնքան մութն եր, վոր նրանք խաչիսափելով եյին առաջ զնում: Գետն այնպես եր աղմկում, վոր կարիք չկար առանձնապես ձայնն իջեցնելու:

Թփի տակից հանկարծ դուրս յեկավ հրացանը ձեռքին մի մութ կերպարանք:

— Ո՞ւմ եք փնտրում:

Լին առաջ յեկալ:

— Յես Զան-Շինի քույրն եմ, իմ հետին-ները մանջուրացի գյուղացիներ են: Մերոնցից են... Զան-Շինին և տասնվեց ուրիշ գյուղացիների յերեկ ձերբակալեցին: Վախենում ենք, վոր նրանց գնդակահարեն վաղը: Դուք պետք ե ողնեք մեզ:

— Հետեւեցեք ինձ,— ասաց կարմիր պարտիզանը:

Յ

Յերբ լուսաբացին զինվորները Լառ-Սենին խրճիթից դուրս բերին, գյուղացիները չգիտե-ին, վոր վերջին անդամն են տեսնում նրան: Զան-Շինը դժվարությամբ ուղղվեց և մոտե-ցավ փոքրիկ լուսամուտին: Նա տեսավ, թե ի՞նչպես ծերունի Լառ-Սենին դուրս բերին բակը և ծունկի չոքեցրին յերեսը դեպի պա-տը դարձրած:

Կապրալն ատրճանակը ձեռքին մոտեցավ նրան: Ծերունի գյուղացին վերջին անդամ բարձրացրեց գլուխը:

Կիրչե՛ն ոտարյերկրյա կեղեքիչները: Կեցը ազատությունը:

Նա ավելի վոչինչ չկարողացավ ասել... Կապրալը կրակեց նրա ծոծրակին: Լառ-Սենի դիակը փովեց գետնին:

Զիու վոտնաձայն լսելով, ճապոնացի սպաներն ահարեկ նետվեցին դեպի դուռը: Մի առժամանակ նրանք վոչինչ չկարողացան նշմարել. ամեն ինչ փոշու ամպով եր պատ-ված: Միայն յերբ ձիավորները ձիերից ցած թռան, սպաները տեսան, վոր դրանք կարմիր պարտիզաններն են:

Կապիտանն արագ վերադարձավ բաղր զինվորներին կարգադրություն անելու հա-մար: Բայց նա տեսավ, վոր բակի խորքում մի քանի զինվորների հրացանների կոթերով ծեծում եյին հաստափոր կապրալին, իսկ մյուսները հանդիսու դիտում եյին: Մեկ ակնթարթում նրանց շրջապատեցին պարտի-զանները:

Պարտիզաններն ափսոսում եյին գնդակ-ները և սպաներին խիում եյին իրենց լայ-նաբերան դանակներով: Հետո զինվորների ուղեկցությամբ պարտիզանները գնացին դե-պի այն տունը, ուր փակված եյին գյուղա-ցիները: Նրանք ջարդեցին փականքը և բացականչեցին.

— Բնկերնե՛ր, դուք ազատ եք:





ԿԱՐՄԻՐ

ՊՐՈ 6

Դուռը ճռաց... Սանդուղքի տակի մութ
վորմնախորշում տղամարդու յերկու կերպա-
րանք ավելի պինդ սեղմվեցին պատին: Բայց
չուտով առաջին հարկից յեկող վոտնաձայները
լուցին: Հիմա նրանք սիրտ արին գուրս գալ
մութ գավիթը: Նրանցից մեկը ժամացույց
նայեց:

— Հինգ բոպե ել կա:

Վոստիկանությանը հայտնի յեր, վոր,
չնայած լեհաստանում մոլեզնող տեսորին,
բանվորներն անլեզալցույց են նախապատրաս-
տում նոյեմբերի 7-ի համար: Սակայն, բոլոր
ջանքերն իմանալու, թե վորտեղ եղա տեղի
ունենալու, անհաջող անցան: Դրա համար ել
նոյեմբերի 7-ին ամենուրեք դրված եյին ու-
ժեղ պահակախմբեր, և բոլոր վոստիկաննե-
րին հրամայված եր շարունակ աչալությ
լինել: Վոստիկանների աչքովն եյին ընկնում
մեծ թվով բանվորներ, բայց դրանք փոքրիկ,
ամենուրեք ցրված խմբեր եյին:
Հետզհետե այդ խմբերն ավելի ու ավելի

եյին ձգվում դեպի կենտրոնական հրապարա-
կը: Այդ ամենը տեղի յեր ունենում այնքան
աննկատ, վոր գրեթե վոստիկանության ուշա-
դրությունը չեր գրավում: Շատերն անհետա-
նում եյին տներում և բակերում, մյուսները
մտնում եյին գարեջրատուն և պատվիրում
եյին մի բաժակ գարեջուր՝ հաճախ վերջին
փողով:

Հրապարակում վոչ վոք չկար, այնպես
վոր, վոստիկանական պահակախմբերն այդտեղ
կանդ չեյին առնում և հանդիսա շարունակում
եյին ճանապարհը: Մութ գավիթում պահ-
վածներից մեկը դարձյալ ժամացույց նայեց.
— Ժամանակն ե,— կամաց ասաց նա իր
ընկերող:

— Հուտով եմ, վոր ամեն ինչ լավ կդնա, —
շշնջաց մյուսը, և յերկուսով դուրս յեկան հը-
րապարակ: Այնտեղ առաջվա պես հանդիսա
եր ու ամայի:

Նրանք դես-դեն նայեցին:
— Բայց տարորինակ ե, վոր մինչև հիմա
դեռ վոչ չկա:

— Ընդհակառակն, լավն ել այդ ե: Դու
հիմա բավական մարդ կտեսնես: — Նա գրա-
նից հանեց սուլիչը և դրեց բերնին: Հնչեց
սուր սուլոցը... .

Հրապարակն իսկույն մարդկանցով լըց-
վեց: Նրանք վագում եյին ամեն կողմից — հա-
րելան փողոցներից, տներից, գարեջրատուն-
երելան փողոցներից, մոտական պարկից: Մի ըոսկ ել չեր ան-
րից, մոտական պարկից: Մի ըոսկ ել չեր ան-

ցել, և արդեն հինգ հարյուրից ավելի մարդ կար: Նրանց մեծ մասը յերիտասարդ բան-վոր-բանվորուհիներ եյին: Նրանք շարվեցին չորս շարքով: Առջևում կանգնածներից մեկը գրպանից հանեց կարմիր կտավը, մյուսը փե-շի տակից դուրս բերեց ձողը: Շարքերի առ-ջեցից ալ բոցի պես ծածանվում եր կարմիր դրոշակը: Նույնական դրոշակներ յերեվացին նաև յերթի ուրիշ տեղերում: Կարմիր Փոնի վրա պարզորոշ կերպով անջատվում եյին սպիտակ տառերը— «Ներո՞ւմն բոլոր քաղկա-լանավորներին»:

Յերբ շարքերը շարժվեցին, Հղոր թափով հնչեցին Հթղափոխական յերգերը:

Բաց լուսամուտներից ահարեկ զարման-քով ցուցարարներին եյին նայում քաղքենի-ները: Մի քանի ըսպեցից ցուցարարները շուռ յեկան գեպի բանվորական թաղամասի նեղլիկ փողոցները: Այստեղ նրանց խանդավառու-թամբ դիմավորեցին և վողջունեցին բոլոր լուսամուտներից: Շատերը միացան ցուցա-րարներին:

Հաղիվ եյին շարքերը ծովել փողոցի ան-կյունը, յերբ ցուցարարների վրա հարձակվեց վոստիկանական մի ջոկատ: Յերդեցողությունն ընդհատվեց: Սկզմված շարքերը քանդվեցին: Մի քանի փայրկյանից վոստիկանները շրջա-պատվեցին զայրագին բոռացող մարդկանց մասսայով: Վոստիկանները ձգտում եյին ցու-

ցարարների ձեռքից խլել դրոշակները, բայց մարդկանց հոծ պատը չեր թողնում նրանց:

Վոստիկաններն սկսեցին անդթորեն ծեծել դրոշակները պաշտպանող բանվորներին, փոր-ձեցին ձերբակալել և տանել նրանց: Կատաղի կոիվ բռնկվեց, ձերբակալվածներին տեղն ու տեղը աղատեցին: Կարմոցներ լավեցին: Սպանվեցին մի քանի բանվոր, և նրանց մեջ մի ջահել աղջիկ:

Հեռվից հնչեց ավտոմոբիլի սույլը: Այդ ձայնն ավելի ու ավելի յե մոտենում. Վոստի-կաններն ոգնական ուժ են ստանում: Մի քանի ցուցարարները, դրոշակները գրպաններում, իսկ դրոշակաձողերը փեշերի տակ պահելով, փոր-ձեցին փախչել:

Բանվորներից մեկը հաղճեպով ծալեց իր դրոշակը և հանձնեց մի փոքրիկ, նիհար տղա-յի:

— Պահի՛ր և փախի՛ր ինչքան կարող ես շուտ: Աշխատիր, վոր քեզ չտեսնեն:

Մոտեցող ավտոմոբիլը դեռ չկանգնած, դուրս թռան վոստիկանները և հարձակվեցին դուրս թռան վոստիկանները և հարձակվեցին դուրս թռան վոստիկանների վրա: Կոխվը շուտով վերջա-րանվորների վրա: Զերցավ... Վիրավորներին են քարշ տալիս: Զերցավ... Վիրավորներին են կապում ու ծեծում:

Կարմիր դրոշակներն ու լողունգներով կարմիր դրոշակներն անհետացան: Վոստի-պատված կտավներն անհետացան: Կանությունն իզուր վազվեց և փնտրեց ամ-կանությունն իզուր վազվեց և փնտրեց ամ-

բակալվածների ու վիրավորների խուզարկությունները:

❀

Մի տարի անցավ... Դատարանի առաջ կանգնած ե մի բանվոր: Նրան մեղադրում են լեհաստանի կոմկուսակցության պատկանելու մեջ: Մեղադրյալների նստարանի վրա նրա կողքին նստած ե նիհար, դժկույն մի պատահի, նրա վորդի Լյուցիանը:

Հոր և վորդու խոսակցությունը մի տարի առաջ, ցուցարարների և վոստիկանության ընդհարման ժամանակ, աննկատ չեր անցել: Լյուցիանին հաջողվել եր դրոշակը փրկել, բայց վոստիկանը միտքն եր պահել նրա դեմքը: Հիմա նա հոր հետ միասին կանգնած ե դատարանի առաջ: Հայրն արիարար ու կայուն կերպով պաշտպանում եր հեղափոխական համոզմունքները: Փոքրիկ Լյուցիանը նայում ե նրան և պարծենում, վոր այդպիսի հայր ունի: Նա աշխատում է նույնպես հանդիստ պատասխանել: Նա զարմանքով ե լսում դատավորի իիստ ձայնը.

— Մեղադրյալի խելացի պատասխանները լեհաստանի պատմության և բնադիտության վերաբերյալ հարցերին վկայում ե այն մասին, վոր նա լիովին պատասխանատու յե իր արաքների համար...

Փոքրիկ ընդհատում դատավճիռը հայտարելուց առաջ: Հետո նույն միալար ձայ-

նը կարդում ե դատավճիռը. «...Կոմունիստական պրոպագանդի համար դատապարտվում ե ութ տարվա տաժանակիրաշխատանքի... տասնչորս տարեկան մեղադրյալ Լյուցիանը մինչև չափահաս դառնալը ուղարկվում է ուղղիչ տուն»:


Մինչև ուղղիչ տունն ուղարկվելը, Լյուցիանը պետք ենստի տաժանակիր աշխատանքի բանարար գողերի ու մարդասպանների հետ քի բանար գողերի ու մարդասպանների հետ միևնույն խուցում: Դեռևս դատարանում նրա աչքերի առաջ հորը շղթայի յեն զարկում: Զնայած շղթաներին, նա բռնում է վորդու ձեռքը, և յերկուսով—հայր ու վորդի— պահակների ուղեկցությամբ թողնում են դատարանի դահլիճը:

Բաժանվելիս, հայրն ամուր սեղմում է Լյուցիանի ձեռքը: Հիմա նրանք չեն տեսնվի չատ տարիներ: Հայրը կհյուծվի տաժանակիր աշխատանքում, իսկ Լյուցիանը՝ «ուղղիչ աշխատանքում»: Այստեղ դաստիարակները և ուսուտանը»: Այստեղ դաստիարակները նրան կծեծեն ու կտանջեն, աշխացիչները նրան կծեծեն ու կտանջեն, աշխատելով նրան գարձնել հնազանդ ու յերկչուտ քաղքենի: Բայց Լյուցիանը յերբեք չի մոռաքաղքենի: Բայց Լյուցիանը յերբեք չի

նա հզոր ցույցը և հոր ձեռքի վերջին ամուս
սեղմումը, — նա իբ ամբողջ կյանքում կմնա
Հեղափոխական...



ՅԱՐՈՆԱԹԻ ԿՈՄԵՐԻ ՏԱԿԱՆ ԻՉՈՒԿԻՆ



Իցուկին շատ զարմացավ, յերբ մի անդամ գիշերվա կեսին նրա մոտ յեկավ Նաշիմուն: Այսոր նա դարձյալ տասներկու ժամ աշխատել է մետաքսի գործարանում և Նաշիմույի հետ միասին յեղել տպարանում: Յերբ նրանք վերջացրին թուուցիկներ տպագրելը, արդեն խորունկ գիշեր եր: Վերադառնալով, նա,
Հոգնածությունից ուժասպառ, նետվեց խսիրի վրա, ուր ցերեկը քնում եյին նրա փոքր յեղբայրները: Հիմա նրանք աշխատում եյին ուումբի գործարանի գիշերային հերթափոխում:

Նաշիմուն ստիպված յեղավ յերկար բազ-իսել թղթի փոքրիկ լուսամուտը, մինչև վոր իցուկին արթնացավ: Վերջապես, բարեկամը ներս թողեց նրան: Նրանք կողք-կողքի նըս-տեցին խսիրի վրա: Համոզվելով, վոր իցուկիի ծնողները և մյուս յեղբայրները ու քույրերը շարունակում են քնել, Նաշիմուն, Հանգստանալով, կամացուկ շնչաց.

— Նազամոն և Հիրոշին ձերբակալված
են...

Իցուկին վախեցած բռնում և նրա ձեռքը:

— Ինձ ել քիչ մնաց բռնելին, — շարունա-
կեց Նաշիմուն: — Իսկ յես մոտս թռուցիկներ
ունեյի:

Իցուկին դողդոջուն շրթունքներով շշն-
ջաց.

— Վաղն առավոտյան զինվորները ճա-
կատ են մեկնում:

— Բայց յես այսոր պետք է տեղափոխեմ
տպարանը: Հավանաբար Հիրոշիի քրոջ տանն
ել խուզարկություն կատարվի:

— Բայց զինվորները վաղն են մեկնում, —
հուզմունքից ձայնը բարձրացրեց Իցուկին:
Նաշիմուն փակեց նրա բերանը:

— Իցուկի, դու, միա՛յն դու կարող ես
զրադիվել թռուցիկներով: Արդեն ուշ ե,
պետք ե շտապել:

88

Առանց վոչ մի բան ասելու, Իցուկին
վերցրեց թռուցիկների կապոցը և թագցրեց
Հագուստի տակ: Ալանջ զնելով ամեն մի
շրջունի, նա վազ տվեց մոտ նրբանցքներով:
Մի անցորդ նկատելիս՝ նա սեղմվում եր
պատին և անշարժ սպասում, մինչև վոր փո-
ղոցը նորից ամայանար:

Ահա և տեսակավորման կայարանը: Նո
ճարպկորեն մագլցեց պատի վրայով և
թեթևացած շունչ քաշեց: Այն զնացքը,

վորը զինվորներին Տոկիոյից Ոսակու յեր
տանելու, գեռմաս կանգնած եր կիսակայարա-
նում:

Նա ուշիուշով նայեց ամեն կողմ: Ինչ-վոր
տեղ, գլխավոր կայարանի մոտերքում, լույս
եր յերևում և լսվում ելին շոգեքարշների
սուլոցները: Բայց այստեղ, տեսակավորման
կայարանում, ամեն ինչ հանգիստ եր և մթու-
թյամբ պարուրված:

Արագ, բայց զգույշ նա հասավ գնացքին:
Ի՞նչ անհաջողություն — բոլոր վագոնների
գոները փակ ելին... Հանկարծ նա նկատեց
մի բաց լուսամուտ: Յերկու-յերեք անդամ
պոկվեց, մինչև վոր նրան հաջողվեց վագոն
մտնել: Նա հանեց թռուցիկները և ցրեց վա-
գոնում: Հաջորդ վագոնի լուսամուտը փակ
եր: Նա թռուցիկները ներս ցցեց դռան տակի
ձեղքից: Դարձյալ կիսաբաց մի լուսամուտ...

Այն ժամանակ, յերբ Իցուկին ուղում եր
մտնել նաև այդ վագոնը, խավարից դուրս
վաղեցին ինչ վոր մարդիկ և բռնեցին նրան:
Հուսահատ մի շարժումով նա պոկվեց կառ-
չուն ձեռքերից և փախալ: Նրան սկսեցին
աղմուկ աղաղակով հետեւել:

Ահա! կայարանը շրջապատող պատը:
Անսպասելի կերպով վոտքը սայթաքեց,
մի առ ժամանակ նա փորձեց վոտքի վրա
մնալ, բայց ընկավ և զլուխը խփելով ուելսե-
րին՝ գիտակցությունը կորցրեց:

— Դարձյալ այս նզովյալ կոմյերիտական-ները: Արդեն ջախջախված ե յերկու տպարան, այս գիշերը ձերբակալված ե մի ամբողջ բանդա, և չնայած դրան... «Մի՞ք կոմի չինացի յեղբայրների դեմ: Զեր թշնամիները վոչ թե չինացի բանվորներն են, այլ ճապոնացի կապիտալիստներն ու ֆեոդալները...»: Հա՞-հա՞-հա՞...

Իցուկին դժվարությամբ բաց ե անում աչքերը: Գլուխը սաստիկ ցավում ե, և նա յերկար ժամանակ չի կարող հասկանալ, թե ինչ ե պատահել իր հետ և վո՛րտեղ ե գտընվում ինքը: Նա պառկած ե մի մեծ, վառ լուսավորված սենյակի հատակին: Գրասեղանի առաջ նստած են զինվորական տարազով յերկու մարդ: Նրանցից մեկը, արմունկներին կոթնած, աչքը հառել ե մի կետի: Մյուսը ձեռքումն ունի թոռոցիկը և կարդում ե առանձին հատվածներ.

«Մի՞թե Մանջուրիայի դրավումից հետո մեղանում կարիքը պակասեց: Վո՛չ, դուք պակաս չեք քաղցում, քան առաջ...»:

Մյուսն ընդհատում ե.

— Յել գիտե՞ք ի՞նչն ե ամենից ցավալին, կապիտան: Այս թոռոցիկները վոգերում են զինվորներին: Մենք շատ ուշ գլխի ընկանք, վոր վակ վագոններն ել եյին նետված: Զինվորները ձեռքից-ձեռք են խլում: Ով կարդալ

չգիտե, խնդրում ե, վոր ուրիշները կարդան...

Նրա աչքն ընկավ իցուկիի վրա:

— Ա՛, տղան ուշքի յե յեկել: Դե՛հ, հիմա մենք կտեսնենք...

Նա բոնեց իցուկիի ոձիքից և բարձրացրեց հատակից: Իցուկին ի վիճակի չեր վոտքի վրա կանգնելու, գլխի խորը վերքից արյուն եր ծորում:

— Վո՞րտեղից ես վերցրել թոռոցիկները:

Իցուկին լուռ եր: Նա մտածում եր իր բարեկամ Նաշիմուլի մասին. «Եա, իհարկե, արդեն կարողացել ետպագրական մեքենան իր տունը փոխադրել: Նաշիմուն միակն ե ամբողջ խմբից, վորին չեն ձերբակալել, վորովհետեւ նրան վոչ վոք չի ճանաչում»:

Հանկարծ նա ցավից բղավում ե: Զինվորականը, վոր բանել եր նրա ոձիքից, ամբողջ ուժով բռունցքով խփեց նրա յերեսին: Իցուկին ցավից չկարողացավ ուշքի դալ: Արյունն արդեն ժայթքում եր քիթ ու բերանից:

— Հիմա կասե՞ս, — ասաց զինվորականն ատամների միջով:

Իցուկին շարունակում եր լուել: Նա լուռ եր նաև այն ժամանակ, յերբ նրան քաշ տվին մյուս սենյակը և բանրուկի գավազաններով. ձեծեցին մինչեւ գիտակցությունը կորցնելը:

⊕

Մի նոր անտանելի ցավիցուկին ստիպեց
աչքը բաց անել: Նրա կոկորդը ջղաճգաբար
սեղմում ելին ինչվոր մեկի մատների մա-
հացու սեղմումով: Այն մարդուն, վոր հիմա
տանջում եր նրան, նա առաջին անգամն եր
տեսնում: Նա սպայի համազգեստ եր հագել:

— Հիմա կխոսե՞ս վերջապես: Վո՞րտեղ
և տպարանը:

Դա կես դիշերին եր: Ամբողջ շենքում
մեռելային լոռություն երտիրում: Միայն այն
սենյակը, ուր նրան հարցաքննում ելին, լու-
սավորված եր:

Իցուկիի գլուխը ծանր ընկալ կրծքին:
Ականջները վժժում ելին: Աչքերի առաջ կար-
միր շրջանակներ ելին լողում: Նա չնչում եր
հերհե:

Լակոտի պես կիսեղեմ, յեթե չտոես,—
մանչում և սպան:

Կարմիր շրջանակները իցուկիի աչքերի
առջե վորոշակի ձև են ստանում... Նախ նա
տեսնում ե Նաշիմույի դեմքը... Հետո
գնացքը... Վագոնների մեջ նստած են զին-
վորները և թոռւցիկ են կարդում, իր թոռւ-
ցիկները... Նրանք ժպտում են իրեն...

Նրան դարձյալ խեղդում են մահացու
սեղմումով: Անողնական մի շարժումով նա
փորձում եր ձեռքը բարձրացնել... Զինվոր-
ների դեմքերը, վորոնց նա հենց նոր այնպես

պարզ տեսնում եր, անհետանում են... նրանց
փոխարեն իցուկիի աչքերի առաջ դարձյալ
պարում են կարմիր բծերը: Նրանք ավելի ու
ավելի արագ են պտտվում:

Հետո իջում ե խավարը...

Սպան մատները բաց ե անում: Իցուկիի
մեռած փոքրիկ մարմինն ընկնում է հատակի
վրա:





Գլուխը փաթաթված եր թաշկինակով, վորը ծածկում եր պատառոտված ականջները։ Դեմքը ներկայացնում եր միակուռ արյունը՝ մի զանգված։ Աչքերը լցվել եյին։ Քիթն ու բերանն այնքան եյին ուսել, վոր ծոված եյին թվում։ Շրթունքի մի կտոր կտրված եր։ Փորձության ժամանակ ջարդված ձեռքը անկյանք կախված եր վիրակապի վրա։ Առողջ ձեռքով նա հենվում եր ճաղի վրա, վոր ըրջապատում եր մեղադրյաների նստարանը։

Դա 1934 թվի հունիսի 24-ին եր Վիեննայի ղինվորական դատարանի նիստում, ուր լսվում եր 22 տարեկան շուցբունդական ժողեք Գեռլի և նրա ընկեր Ռուդոլֆ Անցբեկի գործը։ Նրանց մեղադրում եյին այն բանում, վոր նրանք պայթեցրել եյին ազդանշանը Դանուբի ափի յերկաթուղարծում և փախչելիս կըրակել եյին վոստիկանության վրա։

Դա այն ժամանակ եր, յերբ ընդհատակի պայմաններում կազմակերպությունից կտըր-

ված առանձին հեղափոխական բանվորները կարծում եյին, թե տեռորի ճանապարհով կարելի յե պրոլետարիատին մոբլիզացիայի յենթարկել պայքարելու համար։

— Մեղադրյալ Գեռլ, ի՞նչ ունեք ասելու։

Մեղադրյալ դանդաղ շուր և տալիս իր այլանդակված դեմքը դեպի վկաների նստարանը, ուր նստած են 15 վոստիկաններ։

Նա դժվարությամբ ե արտասանում բառերն իր ուռած ըրթունքներով։

— Նրանք ինձ ծեծեցին և տանջեցին։

Նա բարձրացնում ե սեղմված բոունցքը, նրա ձայնն ամրանում ե։

— Դա, վոր նստած ե այս ծայրից յերկրորդը, տեսուչը, ուեզինե մահակով խփեց գլխիս։ Դատավորը նրան խստիվ ընդհատում ե.

— Բավական է։ Իհարկե, դարձյալ ծեծեցին և տանջեցին։ Դուք դարձյալ այդ հեքյաթներն եք պատմում . . .

Դահլիճում շարժում . . . Դատավորը, հրաժարվելով ընդունել ծեծի այդքան ակներեավաստը, զարմացնում ե նույնիսկ համապատասխան կերպ ընտրված այդ հասարակությանը։

— Վոճռագործության այդ միտքը դուք ինքնուրույն կերպով հղացաք, թե՞ վորեւ մեկը ներշնչեց։

— Վոչ վոք, այդ ամբողջապես իմ միտքն

ե,— պատասխանեց Գեոլը հաստատուն ձայնով:

Ուշադրություն չդարձնելով դատավորի կատաղի գոռողների վրա, նա պատմեց, թե ի՞նչպես եր տեղի ունեցել գործը. նրան վոչվոք չեր ոգնել, վոչ վոք դրա համար չպետք է տուժի: Նա գիտե, վոր կոմունիստական շարժումը դեմ է նման գործողություններին:

Դատավորը նոր հարց է տալիս.

— Դուք գիտեյի՞ք, վոր նման վոճուագործությունը պատժվում է մահով:

— Ինձ համար զողափարն ավելի թանգ է, քան կյանքը:



Ժամը հինգից քառան րոպե անց մեղադրոյալներին կարդացին մահվան դատավճիռը: Յերեք ժամ տասը ըրպեյից հետո այդ դատավճիռը պետք է ի կատար ածվեր:



«...Մեր վերջին ժամերն են: Շուտով յես և Ռուդոն կմահապատճվենք: Բայց մեր մըտքերը ձեզ հետ են: Մենք հույս ունենք, վոր դուք շուտով մեր հայրենիքը կտեսնեք այնպես, ինչպես ցանկանում եք տեսնել: Մենք հանգիստ ենք նայում մահվան աչքերին, վորովհետեւ մեռնում ենք, վորպես սոցիալիզմի զինվորներ, և գիտենք, վոր ոգնում ենք ուրիշներին պայքարելու յերջանիկ ապագայի համար: Շաբունակեցե՞ք պայքարել և

բոլոր ուժերը դրեք սոցիալիզմի կառուցման համար...»:

Կնոջ գալուստն ընդհատեց գրողին: Նա հանգիստ էր, նա մտածում էր իր ընկերուց բովականների մասին, վորոնք ապրում և աշխատում եյին այժմ մեծ և ազատ Խորհրդային Միության մեջ: Նա նետվեց կնոջ ընդառաջ:

Կին իրեն խոսք եր տվել հանգիստ լինել, բայց տեսնելով մահապարտի համազգեստը և կապտած, ուռած դեմքը, նա բացականչեց...»

Նրանց տրամադրության տակ կար ընդգամեն մի քանի ըոպե:

Դու ներումն կստանաս, քեզ պետք է ներումն չնորհեն...

Նրա զեմքի վրայով մի ժողոտ սահեց:

— Նրանք պե՞տք է քեզ ներումն չնորհեն, այլապես յես ձեռք կրարձրացնեմ ինքու ինչ վրա:

Այստեղ նա լրջացավ:

— Լիզա՛, դու ուզում ես վերջին ըրպեսներին խլել իմ հանգիստը: Խոսք տուր ինձ, ինձ վոր քեզ հետ վոչինչ չես անի: Դու՛ յես ինձ վոր քեզ հետ վոչինչ չես անի: Ես այս կեղեցիկ ե յեղել իմ տվել այն ամենն, ինչ գեղեցիկ ե յեղել իմ այստեղին: Շնորհակալ եմ քեզ դրա համար: Կյանքում: Շնորհակալ եմ քեզ դրա համար: Հիմա դու պետք ե շարունակես պայքարը Հիմա դու պետք ե շարունակես պայքարը սոցիալիզմի համար: Վողջույն հաղորդիր սոցիալիզմի համար: Վողջույն հաղորդիր սոցիալիզմի համար: Թող նրանք չմոռանան, թե ինչի՞ ընկերներին: Թող նրանք չմոռանան, թե ինչի՞ ընկերներին:

Զինովնիկը նայեց ժամացույցին:
— Վերջացրեք, ժամանակը լրացավ:

Մահապատճից կես ժամ առաջ Անցրեկն իմանում են ներման մասին:

— Իսկ գեղոլը, — Հարցնում են նա:
— Վո՞չ, նա կրակել ե վոստիկանի վրա:
Անցրեկը բղավում ե խելագարի պես.
— Ինձ հարկավոր չե ձեր ներումը: Յես էլ եմ կրակել: Յեթե դուք նրան կախելու յեք,
ինձ ել կախեցեք նրա հետ միասին:

Գեռլի վերջին խոսքը դատարանում պատճառ դարձավ Անցրեկի ներման: Լսելով, վոր իր ընկեր Անցրեկը կախաղան չե հանվելու, նա մոռացավ իր սեփական վիճակը: Նրա ջարդված դեմքը փայլում եր ուրախությունից: Բայց շուտով կասկածը պատեց նրան:
— Զեմ հավատում, ուզում եք ինձ միւրթարած լինել:

Նա բանտապահին խնդրեց նայել, թե բակում իրո՞ք միայն մեկ կախաղան կա:

Արդեն ժամը ութն ե: Դատավճիռը հայտարելուց հետո յերեք ժամ ե անցել: Սվիդուրս յեկան բանտի բակում զինված զինվորները դուրս յեկան բանտի բակը: Բերին ժողեք դեռլին: Նա տեսավ միայն մեկ կախաղան, և նրա աչքերը փայլեցին ուրախությունից:

Յոթը ըուպե նա պետք ե կանգներ, մինչեւ վոր դատավորը կարգար մեղադրական ակտը և կարգադրել սկսել մահապատճիքը: Հետո հանգիստ ու արիարար նա գլուխը մացրեց ողակի մեջ:

Վիեննայի փողոցներում ցույց ելին անում բանվորները: Բանտի ամբողջ շենքը ըլլագապատել ելին զինված վոստիկանների շղթաները: Պրատերում, Գեռլի տնից վոչ հեռու, վոստիկանությունը ձերբակալեց ցուցարարներին:

Շտրեյերմարկում յերկու հազար բանվոր, ի նշան բողոքի յեռորյա գործադուլ հայտարարեցին:

Կարմիր ոգնությունը տասնյակ հազարավոր անլեզալ թոռուցիկներ եր տարածում և մասսաներին մոբլիզացիայի յեր յենթարկում բողոքելու:

Վիեննայի արվարձանի փողոցներից մեկը շատ տարիներ առաջ կոչվել եր վոմն Գեռլի անունով: Ոտագործելով այդ պատճական զուգատիպությունը, մահապատճիք մի քանի որ հետո բանվորները հետեւյալ պլակատը կախ տվին. «Այս փողոցն այսպիս կոչված ի հիշատակ հեղափոխական բանվոր կոչված ի հիշատակ հեղափոխական բանվոր ժողեք Գեռլի, վորին արյունարրու կառավագությունը մահապատճի յենթարկեց 1934 թ. Հուլիսի 24-ին»:



ԲԱՐԻԿԱԳՆԵՐԸ ՀԱՄԱՍՐԱՅՈՒՄ

Վեճը համալսարանի գլխավոր մուտքի մոտ գնալով ավելի կատաղի յև դառնում։ Մի քանի ուսանող, վորոնք դեռևս հավատում են, թե ունկողը կտահի իր տված խոսքը, ջերմուն պաշտպանում են իրենց տեսակետը։

— Նա ինքը վրդովվեց, յերբ վիշեղրադում համակենտրոնացման համբար բաց արին ուսանողների համար։ Յերբ նա իմացավ, վոր հիվանդ ուսանողներին ստիպում ելին ծանր աշխատանք կատարել, իսկույն պատրաստակամություն հայտնեց գնալ այնտեղ ու անձամբ հետազոտել դրությունը։

— Նա հաստատապես խոստացավ մեզ թելրադ վերադառնալուն պես գալ համալսարան և մեզ պատմել. . . — Խոսք և վերցնում մյուսը։

Մյուսները ծիծաղում են։

— Զարժե այդ մասին մտածել։ Մենք ինքներս նրան ստիպեցինք գնալ այնտեղ։ Նո խոստացավ վիշեղրադի մասին մեզ հաշվե-

տվություն տալ՝ վախենալով, վոր մենք նորից գործադուլ կկազմակերպենք։

Խոսակցությունն ընդհատվեց. . . Մի քանի քաշիստ ուսանողներ փորձում են մտնել համալսարան, բայց գործադուլավորների պահակախմբերը հրաժարվում են բաց անել դռւուը, և Փաշիստները ստիպված հեռանում են։

Յերկրորդ հարկի լեկցիոն մեծ դահլիճում հավաքվել են 400 ուսանողներ։ Նրանք լիակատար լուսություն են պահպանում, յերբեմն միայն շշուկներով ընդհատելով։ Այստեղ տնտովոր հուզմունք է տիրում։ Լսարանում այսոր հավաքվել են զանազան Փակուլտետների՝ փիլիսոփայական, բժշկական, բայց ամենից ավելի իրավաբանական Փակուլտետի ուսանողները։

Մի ժամից ավելի բոլորը համբերությամբ սպասում են ուեկտորի դալուն։ Հետզետե բոլորի համար պարզ է դառնում, վոր նա չի բալու։ Ուսանողներից մեկը ամբիոն և բարձրանում և ժողովը բաց է անում։

Մինչև հիմա նրան սպասեցինք, ավելի սպասել չենք ուզում. . .

Մինչ այդ դահլիճն ավելի ու ավելի յերլցիւմ։ Ավելի քան 600 ուսանող խոնված են նստարանների վրա և լեցնում են նստարանների արանքները։ Հոետորները փոխարինում են միմյանց։ Հանդես են դալիս բոլոր ուղղությունները։

թյունների ներկայացուցիչները, Փաշխտականներից բացի: Նրանք բոլորն ել բողոքում են Հակաֆաշխտ ուսանողներին հալածելու, ուսանողական ազատությունները վերացնելու դեմ, Յուգուլավիայում հեղափոխականորեն տրամադրված ուսանողների համար առաջին համակենտրոնացման ճամբարը ստեղծելու դեմ:

Իսկն ասած, կարիք չկա նրանց միասնությանը կոչ անել: Այդ 600 ուսանող-ուսանողուհիները կազմում են միասնական մի ամբողջ միասնական կամքով և նպատակով: Միաձայն բանաձև և ընդունվում. «Սննդադու հայտարարել, բողոքել համակենտրոնացման ճամբարի դեմ, գրավել համալսարանը»:

Հետո նրանք ցըլում են չենքում և ամենուրեք տենդու աշխատանք ե սկսվում:

Պատշտամբում մի մեծ տախտակ ե կախովում հետելյալ մակագրությամբ. «Ուսանողներն ի նշան բողոքի ընդդեմ Վիշեգրադի համակենտրոնացման ճամբարի՝ սննդադուլ են հայտարարում»: Լուսամուտներում պլակատներ են յերեվում. «Կորչի՛ Փաշխտական դիկտատուրան», «Կեցցե՛ աղատությունը»:

Մի քանիսը լսարանից դուրս են քաշում վիթխարի նստարանները և սանդուղքի վրա բարիկադ են կառուցում: Կարճ ժամանա-

կում իրար հետեւից լույս ե տեսնում գործադրությին թերթի հինգ համար:

Ժամը յերեքին դալիս ե մի վոստիկան և գրավոր կարգադրություն ե բերում անմիջապես ցըլելու մասին: Ուսանողները ձեղջամագան են թուղթը և լուսամուտից դուրս շպրտում:

Փետրվարյան կարճ որը մոտենում երվախճանին, մթնում ե: Բժշկական Փակուլտետի մի ուսանողուհի փորձում ե լույսը վատի մի ուսանողուհի փորձում ե լույսը պատճեն: Անջատիչը չխկում ե, բայց չենքում առել:

Նա վախեցած բղավում ե.

— Ընկերներ, լույսն անջատել են, շուտ ջուր խմեցեք, քանի չեն կտրել: Յերեվի շուտով այն ել կփակեն:

Ուսանողները վազ են տալիս դեպի ջրմուղը, բաց են անում ծորակները... Մի քանի դը, բաց են անում ծորակները... բարակ կաթիլ—և բոլորը...

— Զուրը փակել են:

Համալսարանին միացող փողոցներում գաղաքարեցված եմարդկային շարժումը: Զնադադարեցված եմարդկային շարժումը ջանքերին, Բեյյած վոստիկանության բոլոր ջանքերին, Բեյյած վոստիկանությունը, իմանալով ուսանող-գրադի բնակչությունը, իմանալով ուսանող-գրադի բնակչությունը, գտել ե յելքը: Համաների պայքարի մասին, գտել ե յելքը: Համաների պայքարի մասին, գտել ե յելքը: Համաների պայքարի մասին, գտել ե յելքը: Նրանք վողջունի մարդկանցով: Նրանք վողջունի մարդկանցով: Նրանք վողջունի մարդկանցով: Նրանք վողջունի մարդկանցով:

Լուսամուտներից ուսանողները հետեւմ
են վոստիկանության գործողություններին։
Պարկով դեպի շենքն են ուղղվում 40 հոգուց
բաղկացած մի խումբ վոստիկաններ։ Նրանք
հեծաններ և սանդուղքներ են բերում, վոր-
պեսզի դրաից մտնեն շենքը։ Փողոցի կողմից
շարժվում են ժանդարմական յերեք զորա-
մասեր։ Ցոլորը զինված են հրացաններով։

Ուսանողներն անցնում են յերկրորդ հար-
կը։ Ժանդարմներին հաջողվում է հեշտու-
թյամբ մտնել առաջին հարկը, բայց հենց վոր
մոտենում են յերկրորդ հարկը պաշտպանող
բարիկադներին, ուսանողները նրանց ոմքա-
կոծում են ամեն տեսակ առարկաներով։ Նրա-
տարաններով, աթոռներով, թանաքամաննե-
րով։ Շշկված և վախեցած ժանդարմները
նահանջում են։ Մի քանիսը վիրավորված են։
Նրանց վոխագրում են հիվանդանոց։

33

— Ինկերնե՛ր, դիմացե՛ք։
— Լսեցիք, ինչպես ժանդարմը բղավում
եր, թե «այսոր արյուն և հոսելու»։
— Բայց մենք նրանց հախիցը յեկանք։
Տեսա՞ր ինչպես փախան։

Աղմուկը դարձյալ հանդարտովում է։ Նոր
Հարձակում թշնամու կողմից։ Ժանդարմները
սեղմ շղթայով մոտենում են բարիկադին՝
հրացանները հորիզոնագիր բռնած։

Ուսանողները գտնում եյին դեռ, թե այդ

արվում ե լոկ իրենց վախեցնելու համար։
Բայց առանց վորեւ նախազգուշացման վորո-
տաց համապարկը։ Մի առժամանակ ամեն
ինչ ծխով պատվից։ Ուսանողներն արիարար
շարունակեցին կովել։ Յերբեմն ճիշ եյին ար-
ձակում ուսանողները։ Ներքեվում կանգնած
ժանդարմների գլխին աթոռներ եյին թոշում։
Հազար փշուր ե լինում վայր շպրտված մի
մեծ շիշ։

Վիրավորված ճակատով մի ուսանող ինչ
վոր բան ե ասում։ Դղրդոցից նրա ձայնը հա-
զիվ ե լսվում։

— Միրկո Արցենափիչը սպանված է։ — Ու-
սանողի ձայնի մեջ արցունքներ են դողում։
Նրա աչքերը փայլում են, յերբ նա վերցնում
է մի ծանր թիկնաթոռ և բարիկադի վրայով
ցած նետում։

— Մենք կտրանը սգո դրոշ ենք բարձրա-
ցրել, — բղավում ե վերեկից մի ուսանողուհի։

Ժանդարմները շարունակում են գնդա-
կոծել բարիկադը։ Տանյակ ուսանողներ ծա-
նըր վիրավորված են։ Նրանց վերքերը հապ-
ճեպով կապվում են։

Մի քանի ժամ հետո ուսանողների դեմ
գործի յեն դրվում արտասվարեր ոռւմ բեր։
Նրանք արիարար շարունակում են պաշտպան-
վել։ Սանդուղքի յուրաքանչյուր աստիճանը
ժանդարմների վրա եժան չի նստում։ Միայն

յերեկոյան ժամը տասնունեկին ուսանողների
դիմադրությունը ջախջախվում է...

400 ուսանող-ուսանողուհիներ ձերբակալ-
վում են: Նրանցից շատերը ծանր վիրավոր-
ված են: Նրանց տանում են վոստիկանության
շենքը և անդիմորեն ծեծում են:



Այդ պայքարն անհետ չանցավ: Ամբողջ
յերկրում բարձրացավ զայրույթի վիթխարի
ալիքը: Զագրեբում ուսանողները համերաշ-
խության գործադուլ հայտարարեցին: Բան-
վորական թաղամասերում ՄՈՊ-ը թոռցիկ-
ներ բաց թողեց: Կառավարությանն անթիվ
քանակությամբ բողոքներ ուղարկվեցին: Նա
ստիպված յեղավ աղատ արձակել գրեթե բո-
լոր ձերբակալված ուսանողներին: Վիշեգրա-
դի համակենտրոնացման ճամբարը ցրվեց:
Հաղթանակը մնաց ուսանողներին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0387239

1519

ԳԻՒԾ 60 Կ.

ЭРИХ РИХТЕР
ЮНЫЕ ГЕРОИ РЕВОЛЮЦИИ
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.